

# Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

**Աշուն է, եւ ծանր  
անձրեւի արճիճե  
շեղջեր ֆշելով,  
Եվ ավերք, եւ նեո  
գուժելով՝ թռչում է  
հողմն Ակվիլոն:**

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ



## 2014թ. հոկտեմբերի 10-ին Մինսկում սպորադիկ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի միանալու մասին պայմանագիրը

Նախագահ Սերժ Սարգսյանի  
ելույթը Եվրասիական  
տնտեսական բարձրագույն  
խորհրդի նիստում

**Հարգելի՛ գործընկերներ**  
Վերջին տասնամյակում արդեն բա-  
րի ավանդույթ է դարձել Բելառուսում մեր  
երկրների համար կարելու որոշումների կա-  
յացումը: Մինսկի ներկայիս գագաթնաժողովը՝  
Եվրասիական տնտեսական բարձրագույն  
խորհրդի նիստը, բացառություն չդարձավ:  
Եվս մեկ անգամ շնորհակալություն եմ հայտ-  
նում նախագահ Լուկաշենկոյին՝ այսօրվա  
գագաթնաժողովի աշխատանքները հիմնալի  
կազմակերպելու եւ հյուրընկալության համար:  
Քիչ առաջ պաշտոնապես հայտարարվեց  
Եվրասիական տնտեսական միության մա-  
սին պայմանագրի վավերացման ընթացա-  
կարգերի ավարտի մասին: Շնորհավորում եմ  
Եվրասիական միությունը ձեռնարկած պետու-  
թյուններին՝ այդ սահմանագիծ դուրս գալու  
կապակցությամբ:

## «Հռանսնք վրէջ մըր նշխարար էս ծօրան...»

144 տարի առաջ՝ 1870 թվականին, Ռուսաստանի կայսր  
Ալեքսանդր II-ի հրամանագրով Գորիսը ստացավ քաղաքի  
կարգավիճակ

### Գորիսի տուն

Գորիս քաղաքը հոկտեմբերի 10-ին յու-  
րահատուկ տեսք էր ստացել. նշվում էր քա-  
ղաքի 144-ամյակը, որ հազարամյակների  
պատմություն ունեցող բնակավայր կարելի է  
համարել: Քաղաքի ամեն անկյունը շնչում էր  
գորիսյան ավանդական դարձած տոնակա-

տարությամբ: Ամենուրեք ուրախ տրամադրու-  
թյուն էր՝ մանուկների պար, աշուղական երգ  
ու երաժշտություն, ավանդական հյուրասիրու-  
թյուն...  
Տոնական միջոցառումների մեկնարկը  
տրվեց Մխիթար Սպարապետի հրապարա-  
կից, որտեղ ներկաներին ողջունեցին Սյունի-  
քի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Գորիսի

քաղաքապետ Վաչագան Աղունցը, Սյունյաց  
թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար  
վարդապետ Հակոբյանը, բանակային առաջին  
կորպուսի հրամանատարի տեղակալ, գնդա-  
պետ Վահրամ Հարությունյանը, Գորիսի քույր  
քաղաք Վիենի քաղաքապետ Տիերի Կովակ-  
սին, մեկ այլ քույր քաղաքի՝ բելոռուսական  
Նեսվիժի քաղաքային խորհրդի նախագահ  
Վալերի Լազուկը:  
Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյա-  
նը շնորհավորանքի խոսքում մասնավորա-  
պես նշեց. «Գորիսն իր բազմադարյան պատ-  
մության ընթացքում կարողացել է մաքառել  
թշնամու դեմ, փառքով տոնել իր հաղթանակ-  
ները, սերունդներին թողնել բարձր արժեք-  
ներ: Մեր պատերազմը դեռ ավարտված չէ,  
եւ այն ավարտին հասցնելու համար պետք է  
լինենք միասնական, պատրաստ դիմակայե-  
լու բոլոր արհավիրքներին: Գորիսը պիտի սե-  
րունդներին փոխանցենք այնպիսին, ինչպես  
մեր պապերն են մեզ ավանդել»:  
ՇՆՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՏ 4

## Թանգարանը պատրաստ է աննախադեպ ցուցադրության, երթե միջոցներ լինեն...

### Սյունիք 1-ին աշխարհամարտում

Կապանի երկրագիտական թանգարանի  
փոօրեն, պատմաբան Գրիշա Սմբարյանի  
հետ զրուցում ենք Առաջին համաշխար-  
հային պատերազմին հայերի մասնակցու-  
թյան, մեր պատմության մեջ դրա ունեցած  
հետազոտությունների ու հարկապես աշխար-  
համարտի սյունիքյան առնչությունների  
մասին:

– Պարո՛ն Սմբարյան, նախ ընթերցողին  
հիշեցնենք՝ երբ ասում ենք Առաջին աշխար-  
համարտ, ո՞ր ժամանակների մասին է խոս-  
քը:  
– Առաջին աշխարհամարտն սկսվեց 1914թ.  
օգոստոսի 1-ին եւ ավարտվեց 1918թ. նոյեմբե-  
րի 11-ին, բայց, կարծում եմ, որ մեր ժողովրդի  
համար այն ավելի ուշ ավարտվեց, որովհե-  
տեւ Օսմանյան Թուրքիան շարունակեց պա-  
տերազմն Արեւելքում, եւ մենք դեռ ունեցանք  
Սարդարապատ, Ղարաբաղի լիսա, Բաշ Ապարան  
ՇՆՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՏ 6



Յուրաքանչյուր զիտակցում ենք մեր  
ստանձնած առանձնահատուկ պատասխա-  
նատվությունը՝ առաջինը միանալով Պայ-  
մանագրին: Ես համոզված եմ, որ համատեղ  
ջանքերով մենք կկարողանանք արդյունա-  
վետորեն իրագործել Հայաստանի միանալու  
գործընթացը՝ նվազագույնի հասցնելով ռիս-  
կերը մեր երկրի համար եւ առավելագույնի  
հասցնելով ընդհանուր շահը:  
Բանակցությունների փուլը հեշտ չէր, բայց  
շնորհիվ քաղաքական կամքի, պրոֆեսիոնալ  
մոտեցման եւ լավագույն որոշումներ փնտրե-  
լու պատրաստակամության, մեզ հաջողվեց  
այն անցնել բավականին կարճ ժամանակա-  
հատվածում եւ հաշվի առնել բոլոր ներգրավ-  
ված կողմերի շահերը: Ես շնորհակալ եմ այդ  
գործընթացի բոլոր մասնակիցներին, առաջին  
հերթին՝ պետության ղեկավարներին, Եվ-  
րասիական տնտեսական հանձնաժողովի  
խորհրդին, հանձնաժողովի կուլեգիային, բոլոր  
պաշտոնյաներին եւ փորձագետներին՝ այս-  
քան կարճ ժամանակահատվածում կատար-  
ված այս ահեղի աշխատանքի համար:  
Որոշումը, որը հիմք դրեց Եվրասիական  
ինտեգրացիոն գործընթացներին Հայաստա-  
նի լիիրավ մասնակցությանը, մեր կողմից  
ընդունվեց՝ ելնելով այն հանգամանքից, որ  
մենք Եվրասիական տնտեսական միությու-  
նը դիտարկում ենք որպես սպարաբեղի,  
ծառայությունների, կապիտալի եւ աշխա-  
տուժի ազատ շրջանառության վրա հիմն-  
ված, մեր երկրների համար կանխատեսելի եւ  
առավելագույն շահավետ հարաբերություն-  
ների զարգացման հիմնական ձեռնարկ:  
ՇՆՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՏ 2

# 2014թ. հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրվեց Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի միանալու մասին պայմանագիրը

Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստում



ՍԿԻՋԲԸ՝ ԷՏ 1

Իհարկե, Հայաստանի անդամակցությունը իր առանձնահատկությունն ունի՝ դա Եվրասիական տնտեսական միության մյուս անդամների հետ ընդհանուր սահ-

մանի բացակայությունն է: Սակայն, մենք համոզված ենք, որ այն չի խանգարի Հայաստանի ինտեգրացիային մեր ընդհանուր տնտեսական տարածքում ձեռավորվելիք կարգավորումների միասնական համակարգերին, տրանսպորտի, էներգետիկայի, հեռահաղորդակցության, ֆինանսների համակարգերին:

## ԶԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ. «Կապանում ջրամատակարարման ռեժիմի խախտումները պայմանավորված էին ջրամբարների փակվածությունները փոխելով»

### ՉՌԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

**Սյունիքի մարզի քաղաքներում ներքին ջրափար ցանցի վերափոխումների, համայնքային իշխանությունների հետ ունեցած հարաբերությունների ու ընկերությունում կարարվող կառուցվածքային փոփոխությունների մասին է հարցազրույցը «Հայքրոնոլոյուդի» ՓԲ ընկերության հարավային մասնաճյուղի տնօրեն Զիվան Մարգարյանի հետ:**

– Պարոն Մարգարյան, ինչպես նկատում ենք, մարզի գրեթե բոլոր քաղաքներում «Հայքրոնոլոյուդի» ՓԲ-ն սկսել է ջրամատակարարման բարելավման լայնածավալ աշխատանքները:

– Համաշխարհային եւ Ասիական բանկերի ֆինանսավորմամբ «Հայքրոնոլոյուդի» ՓԲ ընկերությունը մարզում սկսել է ջրամատակարարման բարելավման աշխատանքները: Ազարակ քաղաքի ներքին ջրատար ցանցը եւ մաքրման կայանն ամբողջովին հիմնանորոգվել են: Ավելին ասեմ՝ Ազարակում ջրամատակարարումը բավականին վատ էր, իսկ այժմ այնտեղ ապահովված է շուրջօրյա ջրամատակարարում, իսկ մաքրման կայանն օրինակ կարող է ծառայել շատ քաղաքների համար: Մեղրիում դեռեւս շարունակվում են ներքին ջրատար ցանցի վերափոխման աշխատանքները: Մեկ այլ

ծրագրով նախատեսվում է Զվարի ջրահավաք ավազանը եւ Մեղրու օրվա կարգավորիչ ջրամբարները հիմնանորոգել: Բանն այն է, որ Զվարի ջրահավաք ավազանի ջրամբարի պատերը ժամանակին ձյութով են պատել, որ անորակ ջրի մատակարարման պատճառ է դարձել: Մեղրու կլիմայական պայմանները թույլ կտան ավելի երկար աշխատել, եւ հուսով եմ, որ նախատեսվածից ավելի շուտ կավարտենք աշխատանքները: Շինարարական աշխատանքները Մեղրու «ՃՇՇ» ՍՊ ընկերությունն է կատարում, պայմանավորվածության համաձայն՝ քանդված ասֆալտը պիտի ամբողջովին վերականգնվի: Վարդանիճորի ներքին ջրատար ցանցը պիտի վերանորոգենք: Ճիշտ է, գյուղապետարանը որոշ աշխատանքներ է կատարել, բայց դա հիմնանորոգում չի կարելի համարել:

Կապանում եւս իրականացնում ենք ջրամատակարարման բարելավման ծրագիր՝ երեք ուղղությամբ, որի արդյունքում ներքին ջրատար ցանցը գրեթե ամբողջովին պիտի փոխվի:

Գորիսի վեց, Սիսիանի Սպանդարյան եւ Իշխանասար գյուղերում նույնպես նախատեսվում է կատարել հիմնանորոգման աշխատանքներ:

– Ներքին ջրատար ցանցում կատարվող աշխատանքները, բնականաբար, վնասում են տվյալ հատվածի ասֆալտապատ տա-



**րածքը: Ինչպե՞ս եք կարգավորում այդ հարցը:**

– Ընդհանրապես ոչ մի ծրագիր առանց համայնքային իշխանության հետ համաձայնության չի իրականացվում: Համայնքային իշխանություններն այս հարցը լուծելիս ունենում են իրենց ներդրումը: Ամեն քառակուսի մետր քանդելուց հետո կրկին ասֆալտապատում պիտի կատարվի:

– Կարելի՞ է ասել, որ «Հայքրոնոլոյուդի»-ն հանրապետության մասշտաբով է իրականացնում բարեփոխման աշխատանքները:

– Միանշանակ, կարող ենք ասել, որ ընկերության առաջնային նպատակը հանրապետության ողջ տարածքում ջրամատակարարման մա-

առումով ամենախոշոր տնտեսական միավորումն է: Մենք համոզված ենք, որ Միությունն ունի հսկայական չի-րացված ներուժ աշխարհի տնտեսական քարտեզի վրա իր դիրքերի ամրապնդման համար:

Բացի այդ, Եվրասիական տնտեսական միությունը՝ հիմնվելով համընդհանուր եւ բոլորի համար հասկանալի սկզբունքների վրա, այդ թվում՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպության նորմերի վրա, բաց բնույթ է կրում եւ ենթադրում է լիարժեք ու իրավահավասար համագործակցություն այլ ինտեգրացիոն միավորումների եւ երրորդ երկրների հետ:

Համաշխարհային փորձը վկայում է, որ միավորվելով տնտեսական ինտեգրացիոն կազմավորումների ձեռնարկում՝ զարգացող երկրները կարող են զարգացման եւ մրցունակության բարձրացման ավելի մեծ տեմպեր գրանցել, եթե, իհարկե, բոլոր մասնակիցների ներուժը եւ առավելությունները ճիշտ օգտագործվեն: Մենք կանենք ամեն հնարավորը, որպեսզի Հայաստանը՝ հիմնվելով սեփական փորձի եւ մրցունակության առավելությունների վրա, այդ թվում՝ ինստիտուցիոնալ եւ կառուցվածքային բարեփոխումների շարունակման միջոցով, իր լուծման ներդրի Եվրասիական տարածքի ամրապնդման գործում:

Մենք անկեղծորեն շահագրգռված ենք դրանում եւ պատրաստ ենք Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով նախատեսված նպատակների իրականացման ուղղությամբ սերտ փոփոխակցություններ:

Շնորհակալություն ուշադրության համար:

10 հոկտեմբերի 2014թ.

## Լուրեր

Սահմանադրական փոփոխությունների մասնագիտական հանձնաժողովը հոկտեմբերի 15-ին հրապարակել է 37 նախագահ Սերժ Սարգսյանին է ներկայացրել 37 սահմանադրության փոփոխությունների հայեցակարգը եւ դրանով, ըստ էության, առաջարկել փոխել երկրի կառավարման համակարգը՝ կիսանախագահական անցում կատարել խորհրդարանական համակարգի:

Ըստ 37 կառավարության 2014թ. հոկտեմբերի 2-ի նիստի N41 արձանագրային որոշման, որով հաստատվել է սահմանաձեռն տարածաշրջանների զարգացման 2015թ. տարեկան ծրագիրը, եկող տարի նախատեսվում է 37 պետություններից 80 մլն դրամ հատկացնել Սեդրի քաղաքի N1 դպրոցի հիմնանորոգման համար, եւս 80 մլն դրամ՝ Ազարակ քաղաքի դպրոցի նոր ուսումնական մասնաշենքի կառուցման համար:

Կապանի քաղաքապետարանին կից երիտասարդական խորհրդի անդամները հոկտեմբերի 10-ին այցելեցին բժշկահոգեբանամանկավարժական զնահատման կենտրոնի Կապանի մասնաճյուղ: Դա խորհրդի հերթական նախաձեռնությունն էր: Խորհուրդն իր ուշադրության կենտրոնում է պահում սոցիալապես անապահով խավերին՝ ձգտելով ինչ-որ կերպ նեցուկ լինել նրանց: Բժշկահոգեբանամանկավարժական զնահատման կենտրոնի Կապանի մասնաճյուղում սովորողների համար տարել էին ուսումնական ծրագրերի համար անհրաժեշտ պարագաներ, ցվերներ: Իսկ հեքիաթների կենդանի հերոսները մանուկներին ուրախություն պարգևեցին:

կարողակի բարձրացումն է:

– Վերջերս Քաջարանում, կարծեք, ջրերի հետ կապված խնդիր առաջացավ, թունավորման դեպքերի հավանական վարկած համարեցին խմելու ջուրը:

– Ես միայն կարող եմ ասել, որ Քաջարանի ջրամատակարարման համար մեր ընկերությունը պատասխանատու չէ, այն համայնքային սեփականություն է:

– Կապանում հաճախ են հանրային լուծման կազմակերպվում ջրի որակի հետ կապված, եւ ջրի որակը դարձել է բնակչությանը մտահոգող ամենալուրջ հարցերից մեկը:

– Մի բան է ասելը, մեկ այլ բան՝ ապացուցելը: Գոյություն ունեն ջրի որակի չափանիշներ, որոնց Կապանի ջուրը համապատասխանում է: Կապանում ջրի որակի խնդիր առաջանում է հիմնականում հորդառատ անձրեւների ժամանակ, որը մենք վերահսկել չենք կարող: Եթե բանախոսները կապացուցեն, որ Կապանի ջուրն անորակ է եւ առողջության համար վտանգավոր, մենք կսկսենք լրջորեն զբաղվել այդ հարցով: Հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված մամուլային հանրային լուծմանը մեզ ստիպում են ավելի հետեւողական եւ զգուշավոր լինել ջրի որակի հարցում, բայց քննադատությունն էլ պիտի լինի հիմնավոր, փաստարկված, գրագետ...

– Այս տարի՝ ամռան ամենաշոգ օրերին, Կապանում որոշ ժամանակ օրվա ընթացքում մի քանի ժամ ջուր չի եղել: Ինչո՞վ էր պայմանավորված:

– Չեմ ժխտում, իսկապես Կապանում ջրամատակարարման ռեժիմի խախտումներ են եղել, որ պայմանավորված էր ջրամբարների փակվածությունները փոխելով: Մեկ փակված փոխելու տեւում է 12 ժամ: Ընդհանուր առմամբ փոխվել է ութ փակված: ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՏ 8

Հոկտեմբերի 14-ին Կապանի թիվ 5 հիմնական դպրոցում մեկնարկեց նախագիտակցային եւ գիտակցային ռազմամարզական խաղերի տարածքային փուլը, որին մասնակցում էր տասնհինգ թիմ Կապանի եւ Քաջարանի դպրոցներից: Այն իրականացնում է 37 սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը եւ նպատակ ունի ֆիզիկապես կոփել դպրոցականներին: Խաղերն անց են կացվում երեք փուլով: Հայտնի՝ մարզային փուլին, տարբեր տարածաշրջաններից կմասնակցի երկուական թիմ, հաղթողները նոյեմբերի 5-ից 11-ը կմասնակցեն հանրապետական փուլին: Նախկին տարիների նման թիմերը մրցեցին վեց մարզածեւում՝ ինքնաձիգի քանդում-հավաքում, հրաձգություն, ձգումներ պտտածողի կախված, նռնակի նետում, ուսապարկի փոխանցումավազք եւ կրոսավազք: Նույն օրը ռազմամարզական խաղեր կազմակերպվեցին նաեւ Սիսիանում, Գորիսում ու Մեղրիում:

37 քննչական կոմիտեի նախագահ Աղվան Հովսեփյանը հրամաններ է ստորագրել՝ քննչական կոմիտեի մարզային քննչական վարչության պետերը նշանակելու մասին: Ըստ քննչական կոմիտեի մամուլի ծառայության այդ հաղորդման՝ Սյունիքի մարզային քննչական վարչության պետ է նշանակվել Վահրամ Դաղունցը:



### Տեղական ինֆրակառավարում

# ՄԻՆԻՐ ԶԱՔԱՐՅԱՆ.

## «Եթե որեւէ ներդրող խելամիտ բիզնես-ծրագիր առաջարկի, քաղաքապետարանը պատրաստ է աջակցել»

«Այունյաց երկրի» հարցերին պատասխանում է Ազարակի քաղաքապետը



Պլանավորելով հարցազրույց վարել Ազարակի քաղաքապետ Մինի-թար Զաքարյանի հետ եւ լինելով Ազարակում, չսահմանափակվեցինք նրան աշխատանքային հարցեր ուղղելով: Այլ նախ մի շրջայց կատարեցինք քաղաքում փորձելով տեսնել այն ամենը, ինչ կատարվել է մեկ-մեկուկես տարում: Իսկ որ քաղաքում դրական տեղաշարժեր կան, անզեն աչքով էլ տեսանելի է: Դրական փոփոխությունները նախ՝ քաղաքի սկզբնամասում են, երբ Մեղրուց մուտք եւ գործում Ազարակ: 800 մետր ասֆալտապատ կարճ ճանապարհով Ազարակն արդեն կապված է մաքսակետի հետ, կառուցվում են նոր մաքսային տերմինալ, Ազարակի գործարարի համար օժանդակ կառույց, առանձնատներ: Անկարելի էր չնկատել քաղաքապետ Մինի-թար Զաքարյանի ոգեւորությունը քաղաքի զարգացմանն առնչվող ամեն մի ծրագրի, ամեն մի հարցի մասին խոսելիս: Հնարավոր էր չնկատել նրա լավատեսությունն Ազարակի վաղվա օրվա հանդեպ: Եվ, որ հետաքրքիր էր, քաղաքում շրջապայելիս իր համաքաղաքացիները (գրեթե բոլորը) մտրեւում էր բարեւում էին քաղաքապետին, իսկ քաղաքապետը՝ նրանց: Ինչեւէ, համայնքապետի հետ մեր զրույցն Ազարակի ժողովրդագրական պարկերի, առկա բնապահպանական խնդիրների, բնակչության զբաղմունքային, կոմբինատ-քաղաքապետարան փոխհարաբերության եւ համայնքին առնչվող այլ խնդիրների մասին է:

դինամիկան մեր աչքի առաջ է, տարեկան միջին հաշվով ծնվում է 60-70 երեխա, գրանցվում 30-40 մահ, ինչը վկայում է այն մասին, որ Ազարակը բնավ էլ ծերացող համայնք չէ: Համոզված եմ՝ բնակչինարարությանը զուգահեռ կունենանք նաեւ մեխանիկական աճ:

– Եվ նախորդ հարցից բխող մի հարց, որքա՞ն երեխա է հաճախում համայնքի մանկապարտեզը:

– Մանկապարտեզ է հաճախում 223 երեխա: Չգտում ենք Ազարակի փոքրիկ բնակիչներին ընդգրկել նախադպրոցական կրթության համակարգի մեջ: Նույնիսկ խմբասենյակներում երեք հարկանի մահճակալներ ենք տեղադրել, որ հնարավորություն ունենանք բավարարել երիտասարդ ծնողների պահանջները:

– Իսկ արվեստի դպրոցում ի՞նչ է կատարվում: Չի՞ ձգձգվում դրա վերանորոգումը:

– Արվեստի դպրոցի վերանորոգման վերջին փուլն է ընթանում, մենք դպրոցի գույքն էլ ենք արդեն հատկացրել, շինաշխատանքների 15 տոկոսն է մնացել, շինարարությունն իրականացվում է սոցներդրումների հիմնադրամի միջոցներով: Արդեն ավարտում են, առաջին հարկը վերջացրել են, երկրորդ հարկն են ավարտում, ամենաուշն այս ուստարվա ընթացքում դպրոցը կվերաբացի դռները փոքրիկ արվեստասերների առջեւ: Ամհամբեր սպասում ենք շենքի վերաբացմանը: Արվեստի դպրոցը ժամանակավոր տեղակայված է մշակույթի պալատում, լիարյուն գործում է, տարբեր խմբեր մոտ 200 երեխա է հաճախում, Ազարակի երեխաների զեղագիտական դաստիարակությունը բնավ չի տուժում: Բացի դրանից՝ արվեստի դպրոցի նորոգումից հետո մշակույթի պալատը նոր շունչ կստանա, արվեստի դպրոցը վերաբացելուց հետո մշակույթի պալատը լիարժեք կգործի որպես համայնքի զեղագիտական դաստիարակության օջախ:

– Ազարակը հանրապետության հարավային դարպասն է. Իրա-

նից մեր հանրապետություն մուտք գործող զբոսաշրջիկները, գործարար անձինք, մյուսները մեր երկրի մասին առաջին տպավորությունը ստանում են Ձեր համայնքից, միշտ այստեղ պահանջված է եղել հյուրանոցային տնտեսությունը: Ձեր պաշտոնավարումից ի վեր ի՞նչ տեղաշարժ է արձանագրվել այդ ոլորտում, բավարարո՞ւմ է հյուրանոցային տնտեսության վիճակը, կամ այն շահութաբե՞ր է որպես տնտեսության ճյուղ:

– Թե՛ մինչեւ, որպես համայնքի ղեկավար, պաշտոնավարումը, թե՛ դրանից հետո քանիցս այցելել եմ Իրանի Իսլամական Հանրապետություն, եւ մի եզրակացության եմ հանգել. այն հզոր ներուժը, որ մենք ունենք, շատ նվազ է օգտագործվում: Խոսքը բոլոր ոլորտներին է վերաբերում, եւ ոչ միայն հյուրանոցային տնտեսության: Մարդ մի անգամ լինելով Իրանում, անշուշտ, կհամոզվի դրանում: Ի դեպ, ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատը «Այունիք» ազատ տնտեսական գոտի ստեղծելու նախագիծ էր մշակել, որ ներկայացրել է հանրապետության կառավարությանը: Ծրագիրը հիմնականում ուղղված է հարեան երկրների, այդ թվում՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ արդյունաբերական ենթակառուցվածքների ձեւավորմանը, մեծածախ առեւտրի ծավալների մեծացմանը: Եթե այս նախագիծը չմնա թղթի վրա, կարծում եմ, Ազարակը մեծապես կշահի: Ինչ վերաբերում է հյուրանոցային տնտեսությանը, վերջին տարիներին մի հյուրանոց է կառուցվել: Այժմ քաղաքում հյուրանոցային համարների թիվը 48 է, որն ակնհայտորեն բավարար չէ: Եթե որեւէ ներդրող գտնվի, որ ցանկություն հայտնի այստեղ հյուրանոց, նաեւ ժամանցի օբյեկտներ կառուցել, քաղաքապետարանը պատրաստ է աջակցել: Ազարակի քաղաքապետարանի պաշտոնական կայքէջով էլ առաջարկել ենք, որ յուրաքանչյուր բիզնես-ծրագիր քաղաքապետարանը պատրաստ է քննարկել՝ արտոնյալ կարգով հողատարածք

հատկացնելով, բայց գործարարը պիտի բիզնես-ծրագիր ներկայացնի որոշ ժամանակահատվածի եւ որոշակի նպատակի համար: Այսինքն՝ որեւէ մեկը չի կարող այդ հողը վերցնել որպես սեփականություն եւ մեկ կամ մի քանի տարի հետո վաճառել: Եթե որեւէ կոնկրետ նպատակով են հողատարածքը վերցնում, քաղաքապետարանը պատրաստ է մույնիսկ անհատույց հատկացնել:

– Պարո՞ն Զաքարյան, մի տարվա կտրվածքով քանի՞ աշխատատեղ է ստեղծվել, քանի՞ սը՝ կրճատվել:

– 2009թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո, եթե թվերը հիշում եք, կառավարության մակարդակով պայմանավորվածությամբ կար, Ազարակի կոմբինատում աշխատողների թիվը 900-ից չկրճատել, այսօր, կապված կոմբինատի արտադրական ծավալների որոշակի ընդլայնման հետ, բարի կամքի դրսեւորում եւ կասեի, ձեռնարկությունում աշխատում է 1160 մարդ: Սահմանում նոր ծառայություն է ստեղծվել. սննդի անվտանգության ծառայությունը նոր բաժանմունք է դարձել իր աշխատակազմով: Մաքսակետում բրոկերային ծառայություն է ստեղծվել, դա էլ է նորություն՝ 12 աշխատատեղով, աշխատում ենք երկրորդ բանկը բացել Ազարակում, մաքսային տերմինալ է գործելու շուտով՝ 10-12 աշխատատեղ է ստեղծվում: Դե, Ազարակը մոնոլիտ քաղաք է: Այնպես չէ, որ մի նոր բացված աշխատատեղ վրիպի մեր աչքից:

– Քանի գնում, Ազարակն ակնհայտ, բարեւոք քաղաք է դառնում, բայց երբ մտնում եւ քաղաք, աչքի են գաղթում հեղեղատարով հոսող թափուկաջրերը, որը գցում է տպավորությունը: Եկեք համաձայնեք, որ Ազարակում նաեւ բնապահպանական լուրջ խնդիր կա: Մի քանի օր առաջ Մեղրու գյուղապետերից մեկը նամակ էր գրել Ազարակի կոմբինատի ղեկավարությանը, տարբեր առայաններին՝ այն մասին, որ այդ թափուկաջրերն ուղղակիորեն բացասաբար են անդրադառնում ոռոգման համակարգի վրա. երբ պոմպերով ջուր են մղվում, պոմպերը շարքից դուրս են գալիս, իսկ միջոց որակազրկվում է: Խնդիրը գնալով սուր հնչեղություն է ստանում:

– Օգոստոսին Ազարակում երբ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը, անձամբ այցելեց այստեղ: Այդ խնդիրը շատ խիստ դրվել է, բայց, որքանով հիշում եմ, այդ թափուկաջրերն այդտեղով հոսել են, դա վթարային հեղեղատար է, երբ արտադրության մեջ վթարներ են լինում, թափուկաջրերն այդտեղով են հոսում, արտադրության պրոցեսում վթարներ լինում են, դա չի կարելի բացառել: Հենց այդ հեղեղատարը կառուցվել է այն նպատակով, որ հողատարածությունները չաղտոտվեն: Հին մտվածքը տպավորություն է ստեղծում, որ անընդհատ թափուկաջուր է հոսում: Ազարակի կոմբինատի տնօրենը նախարարին խոստացավ, որ 2015թ. բյուջեն կազմելիս այդ հարցն անպատճառ ներառելու են տարվա բյուջեի մեջ, որովհետեւ նախարարը հարցն անառարկելիորեն դրեց, ընդհուպ մինչեւ լիցենզիայից զրկվել:

– 2008-ից պաշտոնավարում եք, որքանով է աճել համայնքային բյուջեն, ինչքա՞ն է կազմում, եւ հնարավոր է տեղական բյուջեով համայնքում որեւէ գործ ձեռնարկել:

– Գիտե՞ք, ինչ էլ լինի, ֆինանսական միջոցները չեն բավարարում, բայց ասեմ, որ 2.5 անգամ ավելացել է տեղական բյուջեն, 79 միլիոնից հասել 196 միլիոն դրամի:

– Մի քանի խոսքով էլ կոմբինատ-քաղաքապետարան ներկայիս առնչությունների մասին:

Հարունակո՞ւմ է կոմբինատի ղեկավարությունը նպատակ համայնքային խնդիրների լուծմանը:

– Մենք մի օրգանիզմ ենք, եթե կոմբինատն ունենում է ֆինանսական խնդիրներ, դա բացասական ազդեցություն է ունենում համայնքի առջեւ ծառայած խնդիրների լուծման վրա: Մեկս մյուսի հոգսերով ենք ապրում: Աշխատանքային օրս սկսում եմ նրանով, որ համացանցից տեղեկանում եմ, թե ինչպիսին են պղնձի եւ մոլիբդենի գները մետաղական բորսայում: Տրամադրությունս դրանով է պայմանավորված լինում: Համայնքային բյուջեի 20 տոկոսը կոմբինատն է անհատույց հատկացնում: Ի սկզբանե Ազարակի կոմբինատը քաղաքատեղծ գործառույթ է ունեցել, քանի որ բնակավայրը նրա շուրջն է ձեւավորվել:

– Չմեռը թակում է մեր դուռը, եւ շատ բնակիչներ իրենց բնակարաններով Ե՞րբ է վերջապես Ազարակ քաղաքը գազիֆիկացվելու, Ե՞րբ ազարակցին կօգտվի կապույտ վառելիքից:

– Ազարակի կապույտ վառելիքի ապահովումը կապված է Մեղրու տարածաշրջանի գազիֆիկացման հետ: Կարելի է ասել, որ քաղաքի գազիֆիկացումը կիսով չափ լուծված է, մնում է ներքին ցանցի խողովակաշարի անցկացումը, ինչի համար խողովակների անհրաժեշտ քանակությունը ներկրված է Իրանից: Ասեմ նաեւ, որ Մեղրու մաքսակետը, Մեղրու սահմանապահ ջրկատի ուղեկալը եւ Ազարակի գունդն արդեն գազիֆիկացված են:

– Մեղրի գետի հետ կապված վերջին երկու-երեք տարվա աղմուկը քաջածանոթ է բոլորիս: Կուզե՞նայինք իմանալ, թե այդ ծրագրի իրականացումը որ փուլում է:

– Ծրագիրը բաժանված է երեք փուլի, Վարդանիծորից Մեղրի գետի ջուրը պիտի հասնի Արաքսի ափ, այդտեղից խողովակաշարով մի ճյուղը պիտի հասնի Ավան-Շվաբադի, մյուսը տեղից՝ Արաքսի ափից, մինչեւ Ազարակ հասցնելու ծրագրի մրցույթը 2015-ին պիտի կայանա, եւ նոր շինարարությունն իրականացվի: Յուրաքանչյուր երկուսն էլ կայացած ոռոգման համակարգը գյուղատնտեսության հաջողության հիմքն է: Բայց, կարծում եմ, եթե ծրագիրն իր տրամաբանական ավարտին հասցվի, մինեւնյո՞ւմ է, օգոստոս-սեպտեմբերին ոռոգման ջուրը չի բավականացնելու՝ այդ ամիսներին Մեղրի գետի սակավաջրության պատճառով: Ուրեմն հրամայական պահանջ է առաջանում քրամբարի կառուցումը, քանի որ ձմեռն եւ գարնան ամիսներին Մեղրի գետի ջուրն անտեղի հոսում-թափվում է Արաքս գետը: Ազարակի խմելու ջրի հարցը լուծվել է, բայց ոռոգման ջրի հարցը մնում է խնդրահարույց: Եթե ինքնահոս եղանակով ոռոգման ջուրը հասնի Ազարակ, հավատացնում եմ, քաղաքում կանաչ տարածությունները երեք անգամ կավելանան:

– Մենք Ձեզ դիտում ենք տարածաշրջանի մասշտաբով ղեկավար, ուստի նման հարց ենք ուղղում. վերջին մեկ տարում բնապահպանները մեծ աղմուկ են բարձրացրել Մեղրու բնապահպանական միջավայրի, մասնավորապես Տաշտում գյուղում կառուցվող ֆաբրիկայի առիթով:

– Անձամբ գնացել եմ Տաշտում, ծանոթացել իրավիճակին, անկեղծ ասած՝ այնտեղ բնապահպանական խնդիր չեն տեսնում: Հավատացեք, որքանով տեղյակ եմ, Տաշտումում հանքաքարը վերամշակվելու է գրավիտացիոն եղանակով, ինչը շրջակա միջավայրին վնաս չի հասցնում: Բնապահպանների բարձրացրած աղմուկը եւ բնությանը հասցվելիք վնասն անհամաչափ են: Մտքը ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՅ 7



### Գորիսի տուն



## «Յոնանսք վրէջ մըր նշխարար էս ծօրան...»

144 տարի առաջ՝ 1870 թվականին, Ռուսաստանի կայսր Ալեքսանդր II-ի հրամանագրով Գորիսը ստացավ քաղաքի կարգավիճակ

ՍԿԻՉԲԸ՝ ԷՏ 1

Տոնին իր հայրապետական օրինությունն էր բերել Այոնյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Յակոբյանը. «Գորիսը մեզ համար ոչ թե մայրաքաղաք է, սովորական բնակավայր, այլ այն միշտ էլ եղել է մնում է թշնամու դեմ պայքարող վահան: Թող Աստված օրինի Գորիսը, Սուրբ հոգու խաղաղությունը բերի տեղի բնակիչներին: Աստծո սերը, շնորհն՝ ամենքիս վրա, եւ թող Աստված բազում հնարավորություններ տա, որ մենք միասին կարողանանք այս մեր փոքրիկ, գեղեցիկ բնօրրանի տոնկատարությունն ավելի շքեղությամբ նշել »:

Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցը նշեց, որ գորիսյան նմանատիպ տոները եւս մեկ անգամ ապացուցում են, որ մենք ունենք դարերով մեզ հասած հիանալի մշակույթ ու ավանդույթներ, որոնք պետք է պահպանել եւ փոխանցել հաջորդ սերունդներին:

Առաջին բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ, գնդապետ Վահրամ Յարությունյանը հատկապես շեշտեց գորիսեցիների անկուտում կամքի, բոլոր ժամանակներում հայ ազգի հաղթանակների եւ դրանց կերտման ճանապարհին գորիսեցիների ունեցած դերակատարության մասին:

Քույր քաղաքների ղեկավարները հատկապես կարեւորեցին քաղաքների համագործակցությունը՝ գորիսեցիներին մաղթելով նորանոր հաջողություններ ու բարեկեցություն:

Շնորհավորական ուղերձներից հետո տոնի մասնակիցներն այցելեցին Յիմ Գորիս՝ Սուրբ Յովիսիմե եկեղեցի, այնուհետեւ՝ Ամֆիթատրոնի տարածք: Այստեղ մասնակիցները մի պահ մտովի տեղափոխվեցին վաղնջական Գորիս՝ Կյորես՝ ականջալուր լինելով հնացող ու



Ջախից՝ Այոնյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Յակոբյանը, Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցը եւ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը



մաշվող, բայց օրեցօր ավելի շքեղացող Կյորեսի լեզվին: Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան պետական թատրոնի ու Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի ուսանողները

ներկայացրին հատվածներ Ակ.Բակունցի «Կյորես» վիպակից՝ վերջում ներկայներին ավանդական մատաղի համեստի հրավիրելով: Գորիսի Շառլ Ազնավուրի անվան երաժշտական դպրոցի սաները կատարեցին



գեղեցիկ ժողովրդական երգեր:

Հաջորդ կանգառը Սերո Խանգադյանի անվան N 6 հիմնական դպրոցն էր, որտեղ եռագույնի «տեղատարափ» էր. աշակերտներն աղուհացով դիմավորեցին հյուրերին: Սերո Խանգադյանի արձանին ծաղիկներ դնելուց հետո հյուրերին երգ ու պարով ողջունեցին դպրոցի աշակերտները, իսկ վերջում դպրոցի տնօրենը միասնությամբ շուրջպարի հրավիրեց հյուրերին:

Գետափնյա թաղամասի շենքերի խաղահրապարակն այդ օրը սովորականից ավելի մարդաշատ էր: Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի, «Ռոտան հեկերի համակարգ» ՓԲ ընկերության տնօրեն Սասուն Խաչատրյանի, Գորիսի ավագանու անդամ Գոռ Տիգրանյանի, ինչպես նաեւ գորիսեցի բարերարների միջոցներով գեղեցիկ հրապարակ էր կառուցվել, որի բացման պատիվը տրվեց «Ռոտան հեկերի համակարգ»-ի տնօրեն Սասուն Խաչատրյանին: Նշենք, որ մանկական խաղահրապարակի սարքավորումները տրամադրել է «Փյունիկ» հիմնադրամը (տնօրեն՝ Լեւոն Սարգսյան): Քաղաքապետը շեշտեց, որ այսուհետ համայնքի այն թաղամասը, որն ավելի ակտիվ կմասնակցի Գորիսի բարեկարգմանը, մաքուր կպահի իր շրջակայքը, կխրախուսվի նմանատիպ խաղահրապարակ ունենալով: N 3 նախադասարան ուսումնական հաստատության փոքրիկ սաներն իրենց աշխույժ պարով հիացրին՝ ներկայներին պարտավորեցնելով մեր վաղվա օրվա համար ստեղծել համապատասխան պայմաններ:

Գորիսի խորհրդանիշներից մեկն Ակսել Բակունցն է, ում տուն-թանգարանը տոնակատարության հաջորդ հանգրվանն էր: Տուն-թանգարանի «Միրիավ» գրական խմբակի (ծեւավորվել է 2013թ.) անդամները մի պահ բակունցյան հրաշագեղ աշխարհի տեղափոխեցին ներկայներին. «Միրիավ», «Ալիական մառնուշակ» պատմվածքներից՝ հաճելի մեղեդիների ուղեկցությամբ հատվածներ ընթերցելով՝ եւս մեկ անգամ ամրապնդեցին մեծ արժակազրի՝ հայ ժողովրդի հավերժական ընթացքի ուղեկիցը լինելու դերը:

«Միրիավ» գրական խմբակի ղեկավար Թեմինա Մարությանը ներկայացրեց տուն-թանգարանի, գրական ակումբի եւ քաղաքապետարանի կողմից հայտարարված «Միրիավ» ընթերցելուց հետո» վերնագրով դպրոցականների շարադրության արդյունքները: Մրցույթին մասնակցել էին թե՛ քաղաքային, թե՛ գյուղական դպրոցների աշակերտներ: Քաղաքապետ Վաչագան Աղունցն առաջին երեք մրցանակային տեղ գրավածներին պարգևատրեց դիպլոմներով՝ Ակ.Բակունցի ծննդյան 115-ամյակին եւ Գորիսի 144-ամյակին նվիրված

«Միրիավ» ընթերցելուց հետո» շարադրության մրցույթին մասնակցելու համար: Իսկ ոչ մրցանակային տեղ զբաղեցրած աշակերտներն արժանացան շնորհակալագրերի: Առաջին կարգի դիպլոմի արժանացավ Գորիսի N 3 հիմնական դպրոցի աշակերտուհի Ջուլիետա Բաղդասարյանը, երկրորդ կարգի՝ Կորյուն Դաջունցը, երրորդ կարգի՝ Յերմինե Թոխասանցը:

Գորիսեցիները հայտնի են իրենց առանձնահատուկ հյուրասիրությամբ, որ մեր օրերում շատ վայրերում կարծես մոռացության է մատնվում: Բայց գորիսեցիները շարունակում են պահել հնագույն ու բարի այդ ավանդույթը: Տոնական օրն ամեն գորիսեցու տան առաջ առատ սեղան էր բացվել. հյուրերը, բաժակ բարձրացնելով, միմյանց շնորհավորում էին տոնի կապակցությամբ՝ քաղաքին մաղթելով խաղաղություն եւ բարեկեցություն: Գորիսյան հյուրասիրությունը ոգեւորել էր նաեւ քաղաքի օտարերկրացի հյուրերին. մասնավորապես Վիեննի քաղաքապետը նշեց, որ Գորիսից կուզեմար տանել նրա բնակիչների հյուրասիրությունն ու բարյացակամ վերաբերմունքը:

Հոկտեմբերի 10-ի նախօրեին Վիեննի եւ Նեափոփ պատվիրակությունների անդամներն այցելել էին քույր քաղաքների համագործակցության ոլորտ ընդգրկված կազմակերպություններ՝ Գորիսի բժշկական կենտրոն, N 5 ՆՈՒՀ: Հյուրերի համար կազմակերպվել էին հետաքրքիր միջոցառումներ:

Գորիսի ցերեկային խնամքի կենտրոնը հաճախում է 100 հաշմանդամ երեխա, ովքեր հյուրերին դիմավորեցին իրենց կատարումներով: Կենտրոնում գործող կավագործության խմբակի սաներն իրենց ձեռքով պատրաստած իրերը նվիրեցին հյուրերին:

Միֆթար Սպարապետի հրապարակում մշակութային իրարանցում էր: Մի հատվածում բացվել էին արվեստի դպրոցի, Գորիսի տարբեր արվեստագետների, կանանց ձեռքի աշխատանքների ցուցահանդեսներ, մյուս մասում հնչում էին երաժշտական դպրոցների սաների կատարումները, ընթանում՝ շախմատային խաղեր:

Գորիսի մարզադաշտում Գորիսի եւ Կապանի պատանիների ֆուտբոլային հանդիպում տեղի ունեցավ:

Տոնական տրամադրությունն ամբողջացրին Գուսան Աշոտի անվան ժողգործիքների եւ «Սյունիք» պարային համույթների կատարումները:

Վերջում երկնակամարում առկայծող լույսերը մեկ անգամ եւս բարձրաձայնեցին Գուսան Աշոտի սրբազան պատվիրանը. «Յոնանսք վրէջ մըր նշխարար էս ծօրան...»: ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Գործիս տուն

# ... Քամու համբույրից դողաց մի փերել

**Քաղաքի փոստի առիթով Գործիս էին ժամանել հյուրեր հանրապետության մարզերից, մայրաքաղաքից, արտասահմանից: Նրանց թվում էին Գործիս քույր քաղաքներ Վիեննի (Ֆրանսիա) և Նեսվիժի (Բելառուս) պատվիրակությունները: Ֆրանսիացիների պատվիրակությունը ղեկավարում էր Վիեննի քաղաքապետ Տիերի Կովակսին, իսկ բելառուսներիը՝ շրջանային խորհրդի նախագահ Վալերի Լազյունկը: Ու ես էլ ցանկանում եմ նրանցից մի քանի հարցի պատասխան ստանալ:**

...Հոկտեմբերի 10-ի նախօրեին քաղաքը նախապատրաստական եռուզեռի մեջ էր դեռ: Միայն եղանակը չխանգարի: Եղանակի տեսությունն անձրեւային եղանակ էր խոստացել: Առաջներում, հիշում եք, երբ հեռուստատեսությամբ եղանակի տեսություն էին հաղորդում, սրտներում էինք. տնաշենքերը զոռնե պատուհանից դուրս նայեն, հետո գրածը կարդան: Ասում էին՝ հանրապետությունում սպասվում է արեւոտ եղանակ, իսկ պատուհանից այն կողմ անձրեւ էր շրմփում: Հիմա ճիշտ հակառակն է՝ միակ հավաստի բանը, որ կարող ես լսել հեռուստատեսությամբ, դա եղանակի տեսությունն է: Ասել են՝ սպասվում է անձրեւային եղանակ, ուրեմն՝ վերջ...

Այս մտորումների մեջ Ավանգարդ քաղաքումսի իմ բնակարանի պատշգամբից նայում եմ դեպի ցած՝ դեպի Գործիս ծորը վարից ու վերից կամաց-կամաց լցվող ամպերին: Ահա ամպի տակ մնացին քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների շենքերը, այն կլանեց քաղաքապետարանին հարող հրապարակը: Իսկ վերեւից իջնող ամպն ամբողջովին ծածկել է Ակներ գյուղը, իջել մինչեւ Վերիշենի կեսը: Տեսնես որտե՞ղ կհանդիպեն քաղաքի հյուսիսից եւ հարավից արշավող ամպերը:

Մեր տարածքի բնությունը յուրահատուկ է: Աշխարհի ոչ մի անկյունում այդպիսին չկա՝ լավ, թե վատ: Դա միակն է: Մեր բնությունը բանաստեղծ է, քանդակագործ է, գեղանկարիչ է: Իսկ ով կարողանում է այն կարդալ՝ ինքն էլ դառնում է այդպիսին: Համո Սահյանը գրում է. «Քամու համբույրից դողաց մի տերել», Գուսան Աշոտն ասում է՝ «Մեծ Նարաշի ձեռքն է հասել, ծաղիկները գույն-գույն նախշել, Այոնյաց սարերը»: Ակսել Բակունցն էլ թե՛ «Բերդի գլխին նստած ամպը վարագույրի պես մեկ ետ էր քաշվում, մեկ՝ ծածկում կատարը»:

Այս մտորումների մեջ էլ հասունանում, ծնվում են երկու պատվիրակության ղեկավարների տրվելիք հարցերս:

**Մեր բնությունը գեղեցիկ է, մենք դա գիտենք, իսկ դուք ի՞նչը կառանձնացնեիք նրա մեջ: Երկրորդ հարցը. եթե հնարավոր լիներ ինչ-որ բան այստեղից ձեզ հետ վերցնել՝ տուն տանելու համար, ի՞նչ կվերցնեիք: Եվ երրորդ հարցը, որը նպատակ ունեն ուղղել միայն Վիեննի քաղաքապետին, հետեւյալն է՝ յուրաքանչյուր տարի քաղաքապետների գլխավորությամբ պատվիրակություններ են փոխանակվում, ի՞նչ է դրանց ստանում Վիեննի կամ Գործիս շաքային բնակիչը:**

Իրադարձություններն այնպես դասավորվեցին, որ հարցերը հասցրի տալ, բայց պատասխանների մի մասը ստացա Վիեննի քաղաքապետ պարոն Տիերի Կովակսիի ելույթի

ժամանակ, որը, ինքնին, ինձ համար շատ հաճելի էր: Նա ասաց, որ ամեն անգամ իրենց պատվիրակությունը Հայաստանից, մասնավորապես Գործիսից իր հետ Ֆրանսիա է տանում երկիրը, հող հայրենին սիրելու մեր բացառիկ հոգեկերտվածքը: Մնացած երկու հարցին պատասխանեց հետո, երբ արդեն Գործիս գյուղում էինք, կամ, ինչպես Ակսել Բակունցն է ասում, Շենում: Ի դեպ, հարցին պատասխանելուց առաջ նա մի փոքր խորհրդակցեց իր ղեկավարած պատվիրակության հետ: Իսկ պատասխանը հետեւյալն էր. իրենցից շատերն առաջին անգամ չէ, որ գալիս են Գործիս, բայց ամեն անգամ քաղաքը ներկայանում է նորովի, մոտենում են Գործիսի մուտքին եւ միանգամից դառնում նրա համայնապատկերի գերին: Դա անմոռանալի է: Յուրաքանչյուր ոք իր աչքե-



**ՏԻԵՐԻ ԿՈՎԱԿՍԻ**  
Վիեննի քաղաքապետ



**ՎԱԼԵՐԻ ԼԱԶՅՈՒԿ**  
Նեսվիժի շրջանային խորհրդի նախագահ

րով է լուսանկարում քաղաքն ու այդ պատկերը պահում իր հոգու մեջ: Իսկ թե ինչ է տալիս կամ տվել յուրաքանչյուր տարի Գործիս-Վիեննի քույր քաղաքների միջեւ պատվիրակությունների փոխանակումը, ճիշտ կլինեք, եթե այդ մասին հարցն ուղղելի Գործիսի ներկայիս կամ նախկին քաղաքապետին: Հետեւում է այդ խորհրդին: Մոտ քսան տարի շարունակվող բարեկամությունը հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների դարավոր բարեկամության նորոյա արտահայտությունն է: Այդ տարիներին ֆրանսիացի բարեկամները շրջափելի հետք են թողել Գործիսում: Նրանց կողմից տրամադրված 80 հազար եվրոյով վերանորոգվեց քաղաքի գիշերային լուսավորության ցանցը, 120 հազար եվրո տրամադրվեց Գործիս գյուղի Աբ Հեփիսինե եկեղեցու վերանորոգման համար, որն իրականացվեց Վիեննից ժամանած մասնագետների կողմից, վերանորոգվեց N5 մուտր մանկապարտեզի սահմանգույքը, Գործիսի բժշկական կենտրոնը նվեր ստացավ շտապօգնության ավտոմեքենա, բժշկական հազվագյուտ բանկարծեք սարքեր, սարքավորում-



ներ, մահճակալներ, կահավորված ավտոմեքենա եւ մասնագիտական արտահագուստ ստացավ Գործիսի փրկարարական ծառայությունը: Արանք շատ հակիրճ թվարկումն են այն աշխատանքների, որոնց վրա նյութական միջոցներ են ծախսվել: Ոչ պակաս կարեւոր են գործերը, որ հնարավոր չէ չափել որեւէ տարահարմով: Ֆրանսիական պատվիրակության անդամներից մեկն ասաց, որ ինքը Գործիսում համարձակորեն շրջում է առանց թարգմանչի, որովհետեւ համարյա բոլորը հասկանում են ֆրանսերեն, իսկ դպրոցական երեխաները նաեւ տանելի ձևով խոսում են այդ լեզվով: Քաղաքապետարանում իմացանք նաեւ, որ քսան տարում Ֆրանսիայի առաջավոր համալսարաններում բարձրագույն կրթություն է ստացել գործիսցի տասներկու երիտասարդ, իսկ երեք հոգի էլ ներկայումս սովորում է Ֆրանսիայում:

Շենից վերադառնալուց ուղեկցում են Բելառուսի պատվիրակության ղեկավար Վալերի Լազյունկին: Ասում են, որ օտար աչքը սրատես է լինում: Նկատել է, որ գործիսցիներն իրոք անկկարագրելի սեր ունեն իրենց հող ու ջրի, իրենց քաղաքի նկատմամբ: Այդ իմաստով նա լրիվ

բաժանում է ֆրանսիացի իր գործընկերոջ կարծիքը:

Այդ օտար աչքը նկատել էր նաեւ, որ Գործիսը կարող էր սանիտարափոփոխվել առումով ավելի լավ տեսք ունենալ: Դժվար է նրա հետ չհամաձայնել: Հարցնում եմ՝ ի վերջո ի՞նչ է նա ցանկանում իր հետ վերցնել Գործիսից: Նա անապայման վերցնում է երկիրը, հող հայրենին սիրելու մեր բնատուր հավատամքը, եւ այն ոչ մի բանի հետ չի փոխի: Բայց հետո խնդրում է թույլատրել մի բան եւս «վերցնել»՝ տանելու... Նա ցանկանում է «տանել» Հին Գործիսի թաղամասերից մեկը կամ զոռնե մի քանի քարանձավ՝ իրենց քարեղեն զմբեքներով: Եվ իմանում եմ, որ նրանց 790 տարեկան Նեսվիժ քաղաքը (14.5 հազար բնակչությամբ) Բելառուսում հայտնի է որպես զբոսաշրջության կենտրոն: Միայն անցյալ տարի այս փոքրիկ քաղաք է այցելել 800 հազար զբոսաշրջիկ, կամ քաղաքի մեկ բնակչի հաշվով՝ 60 հոգի (մտովի հաշվեք քաղաքապետարանի բյուջեի մուտքերը միայն զբոսաշրջությունից): Պատվիրակության ղեկավարի համոզմամբ՝ այդ դեպքում զբոսաշրջիկների թիվը կկրկնապատկվեր (ահա թե ունից պետք է սովորեցնք):

Ի դեպ, Բելառուսը հետխորհրդային շրջանի միակ երկիրն է, որտեղ պահպանվել են աշխատանքի կազմակերպման, ղեկավարման խորհրդային մեթոդներից շատերը: Այնտեղ գործում են սեփականության բոլոր ձևերը՝ կոլեկտիվ, պետական, մասնավոր:

Քաղաքի գլխավոր արդյունաբերական ձեռնարկությունը շաքարի գործարանն է, որն աշխատանքով ապահովում է շրջանի թե գյուղական եւ թե քաղաքային բնակչությանը:

Այնուհետեւ ցանկացա համդիպել նաեւ Գործիսի նորընտիր քաղաքապետ պարոն Վաչագան Աղունցին՝ շնորհավորել նրան հրաշալի միջոցառման համար, նաեւ մի երկու տողով անդրադառնալ քաղաքապետարանի գործունեությանը՝ կապված քույր քաղաքների հետ համագործակցության ծրագրերին: Չկարողացա համդիպել, զբաղված էր: Միայն ճշտեցի, որ փոխարարձ այցելություն լինելու դեպքում առաջնությունը կտրվի Բելառուս կատարվելիք այցելությանը: Եթե իրոք այդպես է, ապա հարկավոր է առիթն օգտագործել եւ լրջորեն ուսումնասիրել զբոսաշրջության բնագավառում նրանց փորձը...



### Սյունիք 1-ին աշխարհամարտում

# Թանգարանը պատրաստ է աննախադեպ ցուցադրության, եթե միջոցներ լինեն...

ՍԿԻՉԲԸՒ ԷՏ 1

Եւ շատ հաճախ մոռացվող Ձանգեզուրի գոյամարտը:

– Ի՞նչ ընդգրկվածություն ուներ պատերազմը, քանի պետություն էր մասնակցում դրան, քանի՞ մարդ այն ընդգրկեց:

– Պատերազմին մասնակցում էր 34 պետություն, 1.5 մլրդ մարդ, իսկ զոհերի թիվը (տարբեր աղբյուրներում տարբեր թվեր են նշվում)՝ ավելի քան 10 մլն մարդ: Պատերազմի ավարտն ազդարարվեց Կոմպիենյան անտառում մարշալ Ֆոշի սալոն-վագոնում կնքված զինադադարի պայմանագրով, որով Գերմանիան իրեն ճանաչեց պարտված պետություն: Եվրոպայում դադարեց պատերազմը:

– Ի՞նչ գլոբալ հետևանքներ ունեցավ պատերազմն աշխարհի քարտի վրա:

– Կործանվեցին կայսրություններ՝ Օսմանյան, Գերմանական կայսրությունները, Ավստրոհունգարիան: Ռուսական հզոր կայսրության փլուզման հետևանքով նաև նոր պետություններ ստեղծվեցին, այդ թվում՝ Հայաստանի առաջին հանրապետությունը, որոնք հետագայում՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, դարձան ԽՍՀՄ մաս: Այսինքն՝ աշխարհը վերաբաժանվեց, նոր քարտեզ ստեղծվեց, բայց կարծում եմ, որ այդ պատերազմից ամենաշատ վնասը կրել է հայ ժողովուրդը:

– Ինչպե՞ս էին հայերը մասնակցում պատերազմին, ի վերջո, այդ ժամանակ Հայաստանը բաժանված էր երկու մասի՝ Արևելյանը գտնվում էր Ռուսաստանի կազմում, Արևմտյանը՝ Օսմանյան կայսրության, եւ, ըստ էության, հայ ժողովրդի երկու մասերը գտնվում էին պատերազմի տարբեր բևեռներում:

– Արևմտյան Հայաստանում մինչև 50 տարեկան տղամարդիկ զորակոչվեցին ռազմաճակատի տարբեր հատվածներ եւ ոչնչացվեցին, բայց նրանց մի մասը կռվեց: Արևելյան Հայաստանի մասին կոմկոնտ թվեր կան: Ռուսական կայսրության բանակում 250 000 հայ կռվեց տարբեր ռազմաճակատներում: Բացի դրանից, ունեինք ավելի քան 10 000 հայ կամավոր, որոնք կռվում էին Օսմանյան պետության դեմ, կամավորական խմբերը ղեկավարում էին մեզ հայտնի Անդրանիկը, Դրոն, Համազասպը, Քեռին, Վարդանը եւ այլն: Հայկական կամավորական ջոկատները ստեղծվեցին ինքնաբերաբար, դրանց կազմավորմամբ զբաղվում էր Հայ հեղափոխական դաշնակցությունը: Ստեղծվեց Ազգային բյուրո՝ հայտնի մտավորականների մասնակցությամբ՝ Լեո, Հ.Արղության, Նիկոլ Աղբալյան, Ստեփան Լիսիցյան, Հովհաննես Թումանյան, Ալեքսանդր Խատիսյան եւ այլ... Իսկ եթե արդեն մոտենանք Սյունիքին, կամավորական շարժումը ղեկավարում էր Ազգային բյուրոյի պատվավոր նախագահ, կապանցի Մեսրոպ Մազիստրոս Տեր-Մովսիսյանը, ով ակտիվորեն զբաղվում էր եւ հայկական հարցով, եւ ռուսական պետության հետ հարաբերությունների կարգավորմամբ:

– Ինչպե՞ս արձագանքեց հայ քաղաքական միտքը 1914-ին սկսված պատերազմին, մանավանդ երբ Հայաստանի երկու մասերը գտնվում էին հակառակ բևեռներում:

– Կային քաղաքական ուժեր, որ համոզված էին՝ կամավորական շարժումը պետք է, դա ավելի շատ է գրգռում թուրքերին: Պատմագրության մեջ կա այդ կարծիքը, որ եթե չլիներ կամավորական շարժումը, Հայոց մեծ եղեռնը չէր լինի: Բայց նման բան մտածելը, կարծում եմ, անհեթեթ է: Դեռ այն զլխից՝ 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմում (այսինքն՝ Հայկական հարցը միջազգային հարց դառնալուց հետո)՝ Թուրքիան հայերի նկատմամբ բռնեց բացասական, չհանդուրժող դիրք: Եվ, բնականաբար, մեր քաղաքական միտքը էլ միաբեռն լինել էր կարող: Այդ ժամանակ գլխավոր քաղաքական ուժը՝ Դաշնակցությունը, համարում էր, որ պիտի ամեն ինչ անել Արևմտյան Հայաստանն ազատագրելու համար: Հետին թվով պետք է իմաստուն լինել... Հավանաբար դա ժամանակի պահանջներից էր բխում, եւ, միեւնոյն է, ցեղասպանությունը պետք է լիներ, պատերազմն ընդամենը հարմար առիթ էր...

– Իսկ ի՞նչ էր այդ ժամանակ կատարվում Արևելյան Հայաստանում:

– Միշտ էլ ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, բացառությամբ 1826-28թթ. պատերազմի, երբ Թուրքմենչայի պայմանագրով շատ բան ստացանք, Ռուսաստանը որպես կայսրություն չարժեք է իր եւ ոչ թե հայ ժողովրդի շահերով: Կարսը մի քանի անգամ հանձնել է թուրքերին, չի ասել, թե հայերն արյուն են թափել: Նույն բանը տեղի ունեցավ նաև Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական բանակը լքեց ռազմաճակատը, եւ ողջ ժամրությունն ընկավ հայերի վրա:

– Եվ ի՞նչ արդյունք ունեցանք մենք՝ հայերս, Առաջին աշխարհամարտի ավարտին:

– Ունեցանք 1.5 մլն զոհ, դատարկված Արևմտյան Հայաստան, հսկայական քանակությամբ զաղթականներ, կորսված ազգային հարստություն եւ Հայկական հարցի նոր դեգերումներ: Բայց մենք դրա արդյունքում ունեցանք նաև անկախ Հայաստան, որի ժառանգորդը (անկախ նրանից՝ ինչպես է դա գնահատվում) դարձավ խորհրդային Հայաստանը: Մոտ 600 տարի հետո վերականգնվեց հայոց պետականությունը: Բայց այնքան շատ էր նաև մեր կորուստը... Եթե Հայաստանի Հանրապետության ղեկավարներն այդքան բարձր չզգնահատեին արեւմտյան կողմնորոշումը, խորհրդային Ռուսաստանի հետ նորմալ բանակցությունները կարող էին դեպքերն այլ ուղղությամբ տանել... Եթե ժամանակին խորհրդայնացում լիներ, մենք կփրկեինք 20 000 քառ. կմ-ից ավելի տարածք: Իհարկե, հակասական ժամանակահատված է. վերականգնեցինք մեր պետականությունը, բայց կորցրինք նաև ազգի ծաղիկը:

– Պարո՞ն Սմբատյան, այդ ժամանակվա հերոսամարտերում, երբ արդեն մեր երկիրն էինք պաշտպանում, հայկական սպայակազմը հիմնականում 1-ին աշխարհամարտի ռազմաճակատներից վերադարձածներն էին: Մենք հատկապես հաջողություն ունեցանք Սարդարապատում, Բաշ Ապարանում, Դարաքիլիսայում,

Ջանգեզուրի գոյամարտում: Ուրե՞ն էին այստեղ կռվողները:

– Խորհրդային պատմագրությունը տվյալ թեմայի եւ ընդհանրապես այդ սպայակազմի, ցարական բանակի նկատմամբ այլ վերաբերմունք ուներ: Պատճառներից մեկն այն էր, որ ցանկանում էին ողջ հաղթանակը վերագրել գյուղացիությանը, բանվորներին, աշխատավորներին, քարոզել, որ նրանք ինքնաբերաբար գնացին, առանց զենքի, գյուղգործիքներով կռվեցին... Այս հարցում փառք ու պատիվ հայտնի պատմաբան, մեր հայրենակից (Կապանի Արծվանիկ գյուղից) Աշոտ Հարությունյանին: Առաջինը նա հանդես եկավ այդ հարցի լուսաբանմամբ եւ հողված ունի «Շչմարտությունը Սարդարապատի ճակատամարտի մասին», որտեղ ասում է, որ Սարդարապատում կռվել են սպաները, իրենամավորը, ռուսական ցարական բանակի պրոֆեսիոնալ զինվորականությունը: Իսկ խորհրդային պատմագրությունն անընդհատ խուսափել է տալ այդ մարդկանց անունները: Պատճառը ոչ միայն այն էր, որ ցարական բանակից էին, այլև նրանց բացարձակ մեծամասնությունը կամ դաշնակցականներ էին, կամ դաշնակցության զաղափարներ էին կրում:

– Եվ է՞ր փոփոխվեց այդ փաստերի հանդեպ վերաբերմունքը:

– Այնպես է, որ այդ հարցի հանդեպ վերաբերմունքը փոխվեց անկախ Հայաստանում: Դեռեւս խորհրդային տարիներին եղան մարդիկ, որ ներկայացրին Շչմարտությունը, բայց, իմ կարծիքով, իսկական պրոֆեսիոնալ պատմագրության մեջ Աշոտ Հարությունյանի հողվածը սառը ցնցող էր. ամենքին իր տեղն էր դնում: Ի վերջո, պետք էր գնահատել այդ գործողություններում Արամ Մանուկյանի դերը, որ գնահատված չէր, Մովսես Սիլիկովի, Դանիել-Բել Փիրուսյանի եւ մյուսների դերը... Եթե բերեմք Ջանգեզուրի գոյամարտի օրինակը, այդտեղ էլի կռվեցին ոչ միայն Ջանգեզուրի գյուղացիությունը, բանվորները... Ես, իհարկե, հավաքել եմ միայն Կապանի վերաբերող տեղեկություններ, այստեղ նույնիսկ գյուղական ծագումով ցարական բանակի զինվորների ցուցակներ ունեմ, բոլոր գյուղերում վաշտակետերը եղել են ցարական բանակի սպաներ:

– Ինչպե՞ս նրանք հայտնվեցին այստեղ. արդեն զորացրվել էին, թե՞ հատուկ եկան հայրենիքը պաշտպանելու:

– 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական բանակը նահանջում էր, եւ հայերի մի մասը նահանջեց դեպի Արարատյան դաշտ, դեպի Դարաքիլիսա, այդ զինվորականությունը կռվեց այնտեղ: Մեծ մասը, հատկապես դարաբաղցիներ եւ զանգեզուրցիներ, եկան իրենց բնակավայրեր՝ իրենց երկրամասը պաշտպանելու, եւ բազմաթիվ են օրինակները:

– Ի՞նչ էր կատարվում Սյունիքում այդ տարիներին, ի՞նչ անդրադարձ ունեցավ Առաջին աշխարհամարտը սյունիքյան կյանքին:

– Ինչպես ռուսական կայսրության մյուս հատվածներում, այստեղ էլ եղավ զորակոչ: Ջորակոչվածների քանակը հայտնի չէ, ունենք հակասական տեղեկություններ, դժվար է հաշվարկել: Ազգային արխիվի մեր ուսումնասիրություններից կարողա-

ցել ենք պարզել հետևյալ թիվը: Սյունիքից (առանց Մեղրու) զոհվել կամ անհայտ կորել է 750 հոգի, վիրավոր եւ հաշմանդան դարձել՝ 50: Իսկ Կապանում կատարած ուսումնասիրություններից հայտնաբերել են ողջ մնացած եւ պատերազմից վերադարձած 241 հոգու: Արխիվի թվերը վերջնական ու ճշգրիտ լինել չեն կարող, որովհետեւ մարդիկ 1-ին աշխարհամարտի մասնակից էին ներկայանում տարբեր պատճառներով՝ օրինակ թոշակավորվելու: Իսկ Կապանում ինքներս ենք շրջել գյուղերով, հավաքել, հաշվել: Բայց կարծում եմ՝ քիչ է, կլինեն մարդիկ, որոնց մասին վկայություններ չեն պահպանվել:

– Իսկ ինչպե՞ս էին այդ ժամանակ արարում թիկունքում:

– Բաբվի «Արեւ» թերթն է մեզ հիմնականում տեղեկություններ տալիս այդ ժամանակվա Սյունիքի կյանքի մասին. հրաշալի պատկերված են 1914-17թթ. Սյունիքը, թիկունքի մարդկանց կյանքը, հանքերը, գյուղերը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Հայտնի է, որ այդ ժամանակ հանքերը գործում էին, դադարեցին 1918թ., երբ ազգամիջյան բախումների ժամանակ նոր իրավիճակ ստեղծվեց, հույներն ու ֆրանսիացիները հեռացան, սկսվեց քաղաքացիական պատերազմը: Ասեմ՝ ոչ միայն Բաբվի «Արեւից» ենք տեղեկություններ ստանում, ինքներս ունենք վկայություններ այդ ժամանակների մասին: Ինձ հաջողվել է հավաքել կապանցիների հիշողություններ ոչ միայն ռազմաճակատի, այլև թիկունքի մասին: Այդ ժամանակին բնորոշ են տնտեսական քայքայումը, համաճարակները, ամենասարսափելին 1916թ. անբերրիությունն էր, որը հասցրեց թշվառության ու սովի, սարսափելի էր նաև 1918թ. խուլերայի համաճարակը: Բայց մի հետաքրքիր փաստ էլ կա. այդ ժամանակ գործում էին դպրոցներ, մարդիկ պայքարում էին, որ դպրոցները չփակվեն, երեխաներն ուսում ստանան: Հետագայում դպրոցներից շատերը դադարեցին գործել, որովհետեւ ուսուցիչները բանակ զորակոչվեցին:

– Ի՞նչ դեր ունեին այդ դժվար պահին հայ եկեղեցին, հայ հոգեւորականը:

– Միշտ էլ նման օրհասական պահերին հայ հոգեւորականը զինվորի կողքին է եղել, նաև ինքը հայրենիքի զինվոր դարձել: Պատահական չէ, որ հետո նրանք 1937-ի զոհեր դարձան: Մինչդեռ եկեղեցական գործիչները ոչ միայն ազգամիջյան թշնամանք չէին հրահրում, այլ բազմաթիվ դեպքեր կան, երբ խաղաղ ժողովրդի արյունահեղության դեմ են կանգնել: Բայց երբ որ պաշտպանության հարկ է եղել, զենք են վերցրել ու պայքարել...

– Պարո՞ն Սմբատյան, կարողացել է մեր պատմագրությունը ճշգրտորեն արտացոլել 1-ին աշխարհամարտին հայ ժողովրդի մասնակցությունը, նաև ձեռքբերումներն ու կորուստները, թե՞ քաղաքական, զաղափարական նկատումներով շատ բաների մասին չի գրվել:

– Շատերն են այս թեմայով հանդես եկել: Ամենաուշագրավը համարում եմ Ջոն Կիրակոսյանի անդրադարձը: Մեր հայրենակից պատմաբան Աշոտ Հարությունյանի մասին արդեն մեջքի, այլ պատմաբաններ եւս անդրադարձել են թեմային՝ Ռիչարդ Հովհաննիսյան, Հրաչիկ Սիմոնյան, Հայկ Դադարյան, Ծատուր Աղայան: Միշտ մոռանում են, բայց հայերը դեր են ունեցել նաև ռազմական գործողություններում: Աշխարհամարտի մասնակիցների ու հերոսների մասին քիչ է գրվել, շատերի գործունեությանը ծանոթ չենք: Այդ զինվորականներից շատերը հետո դարձան բուլշևիկներ, կոմունիստական ղեկավարներ, բայց նրանց կենսագրությունից (որպես իմպերիալիստական պատերազմի մասնակից) հանվում էր 1-ին աշխարհամարտը: Ընդամենն ասվում էր, որ մասնակցել է 1-ին համաշխարհային պատերազմին, եւ պարտադիր նշվում էր, որ այնտեղ տարվել է բուլշևիկյան գաղափարներով:

– Եթե դիտարկենք զուտ Սյունիքի օրինակը, Առաջին աշխարհամարտի զինվորականությունը կանգնեց նաև հայրենի երկրամասի պաշտպանության դիրքերում: Նրանք հետագայում խորհրդային իրավակարգի կողմից զմայակեցին որպես ազգամիջյան թշնամանք իրահողներ, ազգայնամոլներ, դաշնակցականներ... 1930-ականների քարտականների ճնշող մեծամասնությունը 1-ին աշխարհամարտի զինվորականներ էին՝ մտավորականներ, ազգային պայքարի առաջամարտիկներ, ռազմաճակատի իրամանատարներ: Չմոռանանք՝ Ջանգեզուրի գոյամարտում բոլոր գյուղերի վաշտապետները եղել են Առաջին աշխարհամարտի զինվորականներ: Շատ օրինակներ կարելի է բերել, երբ ճակատամարտի հաղթանակը նրանք են ապահովել:

– Իհարկե, մերոնք զոհեց նրանց հետ չվարվեցին այնպես, ինչպես Ռուսաստանում, որտեղ անգամ պղծեցին նրանց աճյունները:

– Իհարկե, մերոնք զոհեց նրանց հետ չվարվեցին այնպես, ինչպես Ռուսաստանում, որտեղ անգամ պղծեցին նրանց աճյունները: Սրանցից շատերի մասին պիտի որ գաղափար կազմենք. եթե փորհրենք խորհրդային ժամանակվա ազգային անվտանգության արխիվները: Բայց երբ ընթերցում ես հարցաքննությունների արձանագրությունները, նրանք քիչ հարցեր են տվել 1-ին աշխարհամարտին իրենց մասնակցության մասին, ո՞ր ռազմաճակատում են կռվել, ինչպե՞ս են կռվել... Անգամ «Գեորգեյան խաչ» են ստացել, բայց հայտնի չէ՝ ինչի համար: Այդ պատճառով նրանց մասին շատ բան չգիտենք: Ազգային անվտանգության արխիվն անհասանելի է:

– Ինչո՞ւ ողջ Հայաստանում 1-ին աշխարհամարտում զոհվածների հիշատակը հավերժացնող զոհե մեկ հուշարձան չկա... – Դե, դա արգելված թեմա է եղել... Հետո, գիտե՞ք, պատմագրության մեջ մի միտում էլ կա. շատ դեպքերում պատմական մի իրադարձություն գալիս-ծածկում է մյուսին: Առաջին աշխարհամարտը մոռացնել տվեց 1906թ. հերոսամարտը: Եկավ քաղաքացիական պատերազմը, բուլշևիկներին հերոսացրինք, մոռացանք նախկիններից: Հայրենական մեծ պատերազմը մոռացնել տվեց հեղափոխականներին, հիմա էլ Արցախյան պատերազմը մոռացնել է տալիս Հայրենական մեծ պատերազմի հերոսներին...

– Ինչո՞ւ ողջ Հայաստանում 1-ին աշխարհամարտում զոհվածների հիշատակը հավերժացնող զոհե մեկ հուշարձան չկա... – Դե, դա արգելված թեմա է եղել... Հետո, գիտե՞ք, պատմագրության մեջ մի միտում էլ կա. շատ դեպքերում պատմական մի իրադարձություն գալիս-ծածկում է մյուսին: Առաջին աշխարհամարտը մոռացնել տվեց 1906թ. հերոսամարտը: Եկավ քաղաքացիական պատերազմը, բուլշևիկներին հերոսացրինք, մոռացանք նախկիններից: Հայրենական մեծ պատերազմը մոռացնել տվեց հեղափոխականներին, հիմա էլ Արցախյան պատերազմը մոռացնել է տալիս Հայրենական մեծ պատերազմի հերոսներին...

– Գուրբ Կապանում բավականին զործ եք արել այս թեմայով, շրջել ու տեղեկություններ եք հավաքել, փաստաթղթեր ու վկայություններ ունեք, լուսանկարներ եւ այլն. տեղյա՞կ եք՝ մարդի այլ քաղաքներում այդ գործն անողներ կա՞ն: Ի վերջո, եթե դեռ կան հուշեր ու տեղեկություն ունեցողներ, վաղն այդ տեղեկատվությունը հավա-

**Քելն անհնարին կղառնա: Գոնե Սիսիանի եւ Գորիսի երկրագիտական թանգարաններում կա՞ն նման նյութեր:**

– Դիմել եմ երկուսին էլ, խնդրել եմ նյութեր, ասել եմ՝ չունենո՞ւք:

– **Սյունիքը նաեւ Առաջին աշխարհամարտի մեկ այլ ուղղակի հետեւանքի առնչվեց. գաղթականությանը: Քանի՞ գաղթական հաստատվեց այստեղ:**

– Գաղթականության ամենամեծ խումբը Սյունիք մտավ Անդրանիկի հետ, ըստ Արամ Սիմոնյանի՝ 10 000 հոգի: Բայց սա նվազագույն թիվն է, որովհետեւ ուրիշ խմբեր էլ եկան, Գողթանի դեպքերից հետո Ազուլիսից սարերով անցան, ու մինչեւ Անդրանիկն էլի որոշ զինվորականներ իրենց հետ գաղթականներ են բերել, հատկապես որք երեխաներ: Այսինքն՝ Սյունիքն իր վրա կրեց նաեւ Առաջին աշխարհամարտի այդ ծանր բեռը: Այսօր Կապանի տարբեր գյուղերում կան ընտանիքներ, որոնք կոչվում են Գաղթուց ցեղեր, դրանք գաղթականների սերունդներն են: Մենք շատ անվանի սյունեցիներ ենք ունեցել այդ տարիներին. մեկը ռազմական գործողություններում, մյուսը քաղաքական եւ այլ դեր են ունեցել: Բայց ունենք նաեւ գաղթականության հարցերով զբաղված հայտնի սյունեցիներ: Նրանցից է արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանը, ով այս տարածաշրջանում կենտրոնացած է եղել գաղթականության հարցերի վրա: Իսկ Արարատյան դաշտավայրում հայտնի կապանցի Մեսրոպ Մազիստրոս Տեր-Մովսիսյանն էր զբաղվում գաղթականության խնդիրներով ու փրկությամբ:

– **Պարո՞ն Ամբաստյան, սյունեցի կամ սյունիքյան ծագումով ի՞նչ քաղաքական խոշոր դեմքեր ունենք, որ այդ օրերին դեր են ունեցել ազգի ճակատագրի մեջ:**

– Չեմ կարող ասել, թե որչ ազգի ճակատագրի մեջ դեր ունեին, բայց կարող եմ անուններ թվել, որոնք արժանի են հիշվելու, եթե անգամ միայն կերակրել ու փրկել են մարդկանց, իրենց նյութական միջոցները ներդրել ազգի փրկության համար: Ն.Մելիք-Թանգյանին արդեն հիշատակել եմ, կապանցի Արամ Սիմոնյանին ողջ ազգը գիտի՝ Առաջին աշխարհամարտում Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը, որին հետո վիճակվեց դառնալ Երեւանի ազգային խորհրդի նախագահ, եւ հայոց անկախ պետություն ստեղծել, եւ գաղթականությանը փրկել, եւ ռազմաճակատ ղեկավարել: Մեղրեցի խաչատուր Մալումյանը՝ ԳՅԴ աճյուղի Ակունցի, ով «Մշակի» խմբագիրն էր, հայտնի հռետոր, նա է հիմնել Հայ օգնության միությունը, բայց ինչպես շատերը, միանությունն ունեցավ հավատալու երիտուրբերին: Հնչյունային կուսակցության անդամ մեղրեցի Փարսմազը, ով հանդուրժողականության ու խաղաղության կոչ էր անում, կախաղան հանվեց Սուլթան Բայազետի հրապարակում: Նորից մեծ Մեսրոպ Մազիստրոս Տեր-Մովսիսյանին, Վորոնցով-Դաշկովի մտերիմն էր, հայ կամավորական շարժման ղեկավարներից մեկը, Դիվանի ճակատամարտից առաջ զինվորներին հաղորդություն տվողը, ելույթով քաջալերողն ու ճակատամարտի մասնակիցը, նրա մասին անչափ շատ բան կա ասելու... Ազարակ գյուղի խմբավորման հրամանատար կապիտան Ամբաս Թորոսյան, Ղարաբլիխայի ճակատամարտում հրետամու հրամանատար Գուրգեն Տեր-Մովսիսյան, Դիվանի ճակատամարտի մասնակից Պողոս Տեր-Դավթյան, Ջանգեզուրի հերոսամարտի կազմակերպիչներից շինուհայրի Արշակ Շիրինյան... Թիկունքում իրենց ունեցվածքը ներդրողներից հիշենք մեղրեցի Աստատուր Վաչյանին, շրվենանցի

մեծահարուստ Գասպար Տեր-Մարգարյանին, ով մեկ երեխայի համար մեկ ոսկի փրկագին էր տալիս հայ մանուկներ զնելու-փրկելու համար, Գեղանուշից Մանուշար Ավագովին, ով միջոցները չէր խնայում գաղթականությանը կերակրելու համար, ի վերջո, Ամբաս Մելիք-Ստեփանյանի ղեկավարությամբ բնականոն աշխատում էին հանքերը: Որպեսզի այս հերոսական էջերից չբացակայեն կամանց անունները, նշեն մեկին. մենք ունենք Վարսենիկ Մելիք-Ստեփանյան՝ Ամբաս Բեկի քույրը, ով թողեց ուսումն ու եկավ Էջմիածին՝ որբերին խնամելու եւ մահացավ տիֆից...

– **Մեր պատմության մեջ այս դժվարին էջը, փաստորեն, ինչպես հարկն է, լուսաբանված ու քննված չէ պատմաբանների կողմից՝ ԽՍՀՄ գաղափարախոսության, անկախ հանրապետության պարագայում արդեն՝ պատմաբանների անտարբերության ու ծուլության պատճառով. ինչի՞ց պետք է սկսել այսօր:**

– Տավոք, մեր ակադեմիական պատմագրությունը տարվում է հանրահայտ ճշմարտությունները նորից ու նորից գրի առնելով, նույն բաներն արտագրելով... Օրինակ, Սյունիքի պատմության մեջ մեծ ու բացառիկ դեր ունեցող առասպելական կերպար ունենք, 1918-20թթ. ինքնապաշտպանության կազմակերպիչներից խաչատուր Մալիցյանը. այսօր վայոցձորցի Աշոտ Սիմոնյանը զբաղվում է այդ գործով՝ արխիվներում աշխատելով, հարազատների հետ զրուցելով, մամուլի հրապարակումներին հետեւելով... Պետք է գնալ բոլոր այդ մարդկանց ճակատագրի ուսումնասիրության հետեւից, նրանց մեր հիշողությունից չպետք է դուրս թողնել: Մենք ունենք սյունեցիներ՝ սովորական զինվորներ, ովքեր Առաջին աշխարհամարտի ռազմական գործողություններում մեծ դեր են ունեցել. օրինակ՝ Բեգլար Բեգլարյան, Ազար Մկրտչյան, Նավասարդ Վեգիրյան, Դորթոյոզ(չորս սաչքանի) Արշակ, Ալեքսան Կուտանդյան, Բագրատ Հարությունյան, Սուլթան Մելիք-Փարսաղանյան, Սիմոն Մելքունյան եւ այլն, նրանց մեջ «Գեորգիեյան խաչեր» ստացողներ կան:

– **Իսկ գոնե հիմա՝ 100 տարի հետո, մարզում ինչպե՞ս կարող ենք հավերժացնել այդ մարդկանց հիշատակը:**

– Իսկապես ժամանակն է, եթե ոչ ուշացած... Հիմա հաճախ լինում են հիշատակների հավերժացման այնպիսի առաջարկներ, որոնք որեւէ առնչություն չունեն Սյունիքի հետ կամ վիճակագրության եւ, կամ ժամանակավրեպ... Ու դա այն դեպքում, երբ ունենք հիշատակման արժանի նման հերոսներ, նահատակներ: Առաջին աշխարհամարտի հայ զինվորները կոչվեցին իրենց հայրենիքի համար, նրանց մի մասը կամավոր էր. կարող էին փախչել 1917թ., երբ ցարական բանակը գեներ թողած հեռանում էր, բայց 1918-19թթ. եկան, հայրենիքը փրկեցին: Նրանց հիշատակը պետք է հավերժացնել, ցուցակները պիտի անպայման կազմել ու ամբողջացնել: Այդ ուղղությամբ իմ կարծիքով առաջին քայլը ես էի ցանկանում անել՝ Կապանի երկրագիտական թանգարանում ցուցադրություն դնել (դա էլ հիշատակի հավերժացման մի դրսեւորում է), բայց միջոցների սղության պատճառով չկարողացա... Նյութը կա, բավականին աշխատանք է արվել, կան վավերագրեր, հուշագրություններ, լուսանկարներ, օրագրեր, փաստաթղթեր, հետաքրքիր ինը հիշողություն, նույնիսկ Առաջին աշխարհամարտի զինվորների անձնական իրեր, բայց միջոցներ են պետք ցուցադրանքը կազմակերպելու համար: Այն, կարծում եմ, իր տեսակով այս թեմային առնչվող առաջին ցուցադրությունը կլինի:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ



Ազարակ, Նորակառուցյալ դպրոցի մեկը

# ՄԻՒԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ. «Եթե որեւէ Ներդնող խելամիտ բիզնես-ծրագիր առաջարկի, քաղաքապետարանը պատրաստ է աջակցել»

## Ն Տեղական ինքնակառավարում ՍԿԻՔԸ՝ ԷՁ 3

մեր գյուղերը՝ Կուրիս, Գուղեմնիս, Վահրավար, համարյա մարդ չկա, իսկ Տաշտուն գյուղում այս ամառվա աշխուժությունը ոչ մի բանի հետ չեն համեմատի: Եթե բնակատեղիներն աղմուկ են բարձրացնում, նախ՝ Տաշտուն եւ Լիճք գյուղերի բնակիչների կարծիքը պիտի հարցնեն, այնուհետեւ տարածաշրջանի մյուս բնակավայրերի մարդկանց: Խոսվում է, որ Մեղրի գետն աղտոտվելու է, ընդհանրապես նման բան չկա: Հանքաքարը 7կմ հեռավորությունից բերելու են՝ փոքր ծավալներով եւ տեղում վերամշակեն, ինչն ունեցած տվյալներով՝ 1.7 տոննա ոսկի պիտի ստանան, այդքան է պաշարը: Ըստ իս՝ Տաշտունին եւ շրջակա միջավայրին նույն վնասը պիտի հասցվի, եթե Տաշտունում մի հսկա շենք կառուցեն: Դրա շինարարության ընթացքում էլ, չէ՞, շրջակա միջավայրին վնաս կհասցվի, փոշի կբարձրանա, շինարարական աղբ կգոյանա եւ այլն: Բայց որ ասում են՝ բնութաբանը հոշոտվում է, նման բան չկա: Որքան շփվել են տաշտունցիների հետ, նրանք դրականորեն են տրամադրված ֆաբրիկայի գործարկման առումով: Գյուղն ապրում է, գյուղը շնչում է, թող Աստված տա, այնքան իրավիճակը բարելավվի, որ այդ հանքի կարիքը չունենան, բայց այս պահին օդի ու ջրի պես անհրաժեշտ է այդ արտադրությունը:

– **Թույլ տվե՞ք մի հարց էլ տալ համատեքստից դուրս. ինչպես ցույց է տվել կյանքը, մեր համայնքների որոշ ղեկավարներ մարդկատեղիության պահերին իրենց հռչակում են որպես մարդկայնի թեկնածու: Բայց ամիսներ հետո, երբ մարդի ղեկավար է նշանակվում, իրենք ձգնում են հակառակն ապացուցել, որ նման ցանկություն չեն ունեցել: Դա է նորմալ**

է, երբ համայնքի ղեկավարը ցանկանում է դառնալ մարդպետ, բայց տարօրինակն այն է, որ նման մտադրություն հայտնում են մարդիկ, ովքեր նախ՝ իրենց պաշտոնում, ցավոք սրտի, դեռ չեն կայացել, երկրորդ՝ դա անում են կարծես իրենց անձը կարեւորելու նպատակով: Թվում էր, թե Դուք էլ նույն կերպով կվարվեիք, նկատի ունենալով Ձեր գործարար հատկանիշները, բայց սեսանք միայն Ձեր լուրջությունը:

– Միշտ այն ճշմարտությունն են հիշել, որ զինվոր չէ այն զինվորը, ով չի ուզում գեներալ դառնալ: Սյունիքն ունի 150 հազար բնակչություն, եւ նրանից մեկը պիտի լինի մարդպետ: Եվ իմ ցանկությունն է, որ նշանակվի արժանավորը: Այդպիսի ղեկավարի դեպքում մարզը առավելագույնս կշահի, նաեւ մեր պետությունը: Դա այն ոլորտը չէ, որտեղ ինչ-որ մեկն իր անձը ցուցադրի: Ինչ վերաբերում է իմ ցանկություններին ու պլաններին, կիիշեցնեն Ձեր թերթում երկու տարի առաջ տպագրված մեր հարցազրույցի վերնագիրը՝ «Հետագա գործունեություննս պատկերացնում են միմիայն Մեղրու տարածաշրջանում»: Այսօր էլ այդ կարծիքին եմ եւ տեսանելի ապագայում այն չեմ փոխելու: Յուրաքանչյուրն այն ոլորտում պիտի ծավալի իր գործունեությունը, որտեղ օգտակար գործողության բարձր գործակից ունի:

– **Այս հարցը մեր նախորդ հարցազրույցների ժամանակ էլ ենք ուղղել Ձեզ, բայց քանի որ այն տակավին օրակարգում է ու հրատապ, կուզեի՞նք իմանալ, թե համայնքների խոշորացման հայեցակարգի վերաբերյալ Դուք նախկին կարծիքի՞ն եք, թե՞ առարկայի առնչությամբ փոփոխություն է եղել Ձեր պատկերացումներում:**

– Մնում են նույն կարծիքին, ապագան համայնքների խոշորացումն է, ռեսուրսների կենտրոնացումը: Դարձյալ նույն համոզմունքն ունեն, որ փոքր համայնքն իր խղճուկ

բյուջեով ընդամենը զոյատեւման հարց է լուծում: Ստեղծվել է կազուսային մի իրավիճակ, երբ համայնքի ղեկավարը չի կարող ուրք գցել, օրինակ, էներգացանցի տնօրենի, ոստիկանապետի, հարկային տեսուչի հետ: Նման համայնքապետը հազիվ իրեն է պաշտպանում, ինչպես կարող է համայնքի շահերը պաշտպանել: Բերեմ մի օրինակ. վերջերս խնդիր ծագեց Կուրիս, Գուղեմնիս, Վահրավար համայնքների եւ «Հայքմուլտիկոնուդու» հարավային մասնաճյուղի միջեւ, որը փորձ արվեց հարթել մարդային իշխանության միջոցով: Բայց եթե ղեկավարությունը մի կենտրոնից լինեք, այսինքն՝ Մեղրու տարածաշրջանը մի համայնք լինեք, նման իրավիճակ չէր ստեղծվի:

– **Կուզե՞նայինք անդրադառնալ Ազարակին մերձ կառուցվող հիվանդանոցի շինարարությանը: Կարծես, դա ձգձգվում է, եւ եթե չենք սխալվում, հանրապետության նախագահը հիվանդանոցի շահագործման ժամկետ էր նախանշել:**

– Այո, դա 2015 թվականն է, երկել լսեցի, որ Ազատ Գասպարյանից շինարարությունն իրականացնելու գնային առաջարկ են ուզել: Կարծում եմ, որ հմուտ այդ շինարարը կարող է հիվանդանոցի շինարարության գործունեությունը մտցնել: Նոր հիվանդանոցի շենքի գործարկմամբ մենք էլ ենք շահագրգռված, քանի որ նպատակ կա հիվանդանոցի հին մասնաշենքը վերածել բնակարանների: Տուն կառուցելու նպատակով 30 հոգու հողատարածք ենք հատկացրել, այդ տարածքում, նաեւ պաշտպանության նախարարության միջոցով, լուծվել է կոյուղու հարցը: Համայնքում երեք առանձնատուն է կառուցվել. այդ փաստը են շատ են կարեւորում: Այդպիսի զգացողություն ունեցել եմ, երբ սեփական տունս եմ կառուցել:

Հարցազրույցը՝ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ



# ԶԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ. «Կապանում ջրամաքակարարման ռեժիմի խախտումները պայմանավորված էին ջրամբարների փականները փոխելով»

## Չճանաչակարարում

ՍԿԻՉԲԸՆ՝ ԷՏ 2

– Կապանում ի՞նչ նոր ծրագիր էք պատրաստվում իրականացնել:

– Կապանում նախատեսվում է օգտագործել ստորերկրյա ջրեր, որի համար կատարում ենք համապատասխան աշխատանքներ: Բանն այն է, որ երբեմն, օրինակ, մեքենաների դիզելային շարժիչները փակվում է գետ, որտեղից մաքրման կայան լցվող ջուրը դժվարությամբ է մաքրվում: Հնարավոր է, որ այդ ընթացքում ջրի որակը խախտվի. այդ է պատճառը, որ մենք անցնում ենք ստորերկրյա ջրերի օգտագործմանը:

– Վերջերս շրջանառվում են խոսակցություններ ընկերության կառավարման համակարգում փոփո-

խություններ կատարելու մասին:

– Ընկերության կառավարման համակարգում որոշակի փոփոխություններ են կատարվում, որ բնական են համարում: Ժամանակի հետ ամեն ինչ ավելի է մասնագիտացվում: Աշխատանքներ կան, որոնց կարիքը ժամանակի ընթացքում արդեն չի զգացվում, եւ բնական է, որ պիտի կրճատվեն լինեն: Բացի դրանից՝ ընկերության նպատակն է նաեւ տարեցտարի աշխատավարձի բարձրացումը, որ երբեմն կատարվում է աշխատատեղերի կրճատումների հաշվին: Ես, բացի «Հայքոնոլոգի» ՓԲԸ-ի հարավային մասնաճյուղը ղեկավարելուց, այժմ նաեւ հյուսիսարեւմտյան մասնաճյուղի ղեկավարն եմ:

– «Հայքոնոլոգի» ՓԲ ընկերությունը, կարծեք, տեսական

ժամանակ մարզի քաղաքային իշխանությունների հետ խնդիրներ ունեք: Ներկայումս հարաբերությունների սուր դրսևորումներ կա՞ն, թե՞...:

– Մեղրու քաղաքային իշխանության հետ կարգավորվել են հարցերը: 15 տարով պայմանագիր ենք ստորագրել՝ ներքին ցանցի օգտագործման վերաբերյալ: Կապանում, Գորիսում, Սիսիանում նույնպես այդ հարցը լուծված է: Ես այն կարծիքին եմ, որ ժամանակի ընթացքում տեղական իշխանությունները կհասկանան, որ միայն համայնքային բյուջեով հնարավոր չէ ներքին ջրատար ցանցում հիմնանորոգում անել, եւ այդ գործը պիտի վստահել մասնագիտացված ընկերությանը, որ այս պահին «Հայքոնոլոգի» ՓԲ ընկերությունն է:

– Մշտապես խոսում ենք ջրամաքակարարման մասին՝ կարծեք մոռանալով, որ ընկերությունը պատասխանատու է նաեւ կոյուղու համար, որտեղ պատկերն այնքան էլ մխիթարական չէ:

– Համամիտ եմ, որ այստեղ բավականին շատ աշխատանքներ ունենք կատարելու: Ես այն կարծիքին եմ, որ ինչքան ջրամատակարարումը կարգավորվի, այնքան կոյուղու խնդիրները կշատանան: Նախկինում, երբ ջրաչափներ չկային, ջուրն անընդհատ հոսում էր, եւ կոյուղին մաքրվում էր, հիմա երբ մարդիկ ջուրը խնայում են, կոյուղու հետ կապված խնդիրները շատանում են: Բանն այն է, որ կոյուղու կեղտաջրերը երբեմն խառնվում են խմելու ջրին, եւ բնական է, որ ջրի որակի խնդիրներ են առաջանում: Սովորաբար ամենամեծ խնդիրներն Ամառոտի ենք ունենում: Ընկերությունը, հիարկե, այդ ուղղությամբ որոշակի աշխատանքներ կատարում է: Հանրապետությունում կոյուղու կեղտաջրերի մաքրման կայաններ ենք կառուցում: Գավառում, Մարտունիում ավարտվել են աշխատանքները: Կգա ժամանակ, որ Սյունիքի քաղաքներում նույնպես այդ հարցը պատշաճ լուծում կստանա:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Բուժօգնություն անդր-օվկիանոսից

Օրը կիրակի էր (հոկտեմբերի 12), բայց աշխուժություն էր «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության պոլիկլինիկայի միջանցքներում: Մի քանի կարիներների առջեւ խմբված էին մարդիկ՝ սպասելով իրենց հերթին: Կենտրոնի տնօրեն Սմբատ Օրբելյանի հրավերով Կապան էր այցելել հայ բժիշկների խումբը Ամերիկայի Միացյալ Նահանգների Կալիֆորնիա նահանգի Բերկլեյ-Մոնտեռեյի համալսարանի Մարիան Ավագյան-Մանուկյանը, ռեւմատոլոգ Նոնա Փաշինյանը, գինեկոլոգ Յելենա Սարգսյանը, մաշկաբան Անի Թաջիրյանը: Մարիան Ավագյան-Մանուկյանի փոխանցմամբ՝ Հայաստանում 52,000 դիաբետով հիվանդ կա, որից 12,500-ը ինսուլին է սրկվում: Իսկ Համաշխարհային առողջապահական կազմակերպության տվյալներով՝ դիաբետով 120,000 հիվանդ կա: Թվային այդ տարբերությունն հետեւանք է այն բանի, որ շատերը չեն արտոնում չի հայտնաբերվում: Բժշկուհու հավաստմամբ՝ Կապանում եւ Քաջարանում տարածված է նաեւ խափալը, ինչը պայմանավորեց կերակրի աղի մեջ յոդի բացակայությամբ: Իսկ երբ իմացավ, որ մեզանում աղը յոդացվում է, հույս հայտնեց, որ այդ, ինչպես նաեւ վահանագեղձի հետ կապված որոշ հիվանդություններ կզիջեն իրենց դիրքերը:

Ռեւմատոլոգ Նոնա Փաշինյանը հայտնեց, որ մի օրվա իր բուժօգնումը ցույց տվեց, որ Կապանում հողացավով հիվանդները եւս մեծ տոկոս են կազմում, եւ ոմանց մեջ այդ հիվանդությունն այնքան է խորացել, որ վիրահատական միջամտության կարիք կա: Գինեկոլոգ Յելենա Սարգսյանը հավելեց, որ ինքը հետաքրքրված է, թե, մասնավորապես, արգանդի վզիկի հիվանդությունները որքանով են տարածված Կապանի տարածաշրջանում, նաեւ հայտնեց, թե Հայաստանում գործող մի ծրագիր հնարավորություն է ընձեռում արգանդի վզիկի քաղցկեղը բացահայտել 30-60 տարեկան կանանց շրջանում, եւ իրենց ցանկանում են այդ ծրագրի շրջանակում ընդգրկել ավելի երիտասարդ կանանց, ինչպես նաեւ բացահայտել բորբոքային այն հիվանդությունները, որոնք հանգեցնում են անպտղության:

Հոկտեմբերի 13-ին ամերիկահայ բժշկուհիները հանդես եկան դասախոսություններով:

ԱՎԱՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

# Չորս ոսկի, երեք արծաթ

## Մարզական

Մեղալների մեծ ավարով քիբրոսիցի Կապանի «Գարեգին Նժդեհ» ակումբի սաները (մարզիչ՝ ՀՀ վաստակավոր մարզիչ՝ Արա Սարգսյան) վերադարձան Հայաստանի անկախության տոնին նվիրված Արարատքանի գավաթի խաղարկությունից, որ տեղի ունեցավ հոկտեմբերի 4-5-ը մայրաքաղաքի «Դինամո» մարզադահլիճում: Կարեն Գալստյանը (մինչեւ 28կգ քաշային կարգ), Արայիկ Ավետիսյանը (31կգ), Դավիթ Գրիգորյանը (33կգ), Շանթ Դավթյանը (54կգ) դարձան հաղթող, իսկ Էրիկ Մարտիրոսյանը (32կգ), Արտուշ Ավետիսյանը (43կգ), Վլադիմիր Հովհաննիսյանը (մինչեւ 63.5կգ) բավարարվեցին երկրորդ տեղով: Ընդհանուր թիմային հաշվով Կապանի «Գարեգին Նժդեհ» ակումբը գրավեց երրորդ տեղը: Եղան նաեւ տպավորիչ մենամարտեր. կիսաեզրափակչում Արայիկ Ավետիսյանը մրցակցին հաղթեց նոկաուտով: Այս անգամ գավաթի խաղարկությունը հովանավորած Արարատ (Ալիկ) Վեգիրյանը



եւ ակումբի մարզիչ Արա Սարգսյանը արժանացան «Դինամո» մարզական ՀԿ-ի դիպլոմի: Ի դեպ, նշենք, որ հովանավորների բացակայության պատճառով «Գարեգին Նժդեհ» ակումբի սաները չկարողացան մասնակցել օգոստոսին Կրասնոսնովսկայան միջազգային մրցաշարին եւ սեպտեմբերին տեղի ունեցած մարզաձեւի

աշխարհի առաջնությանը: Ակումբի սաները եւ մարզիչը հուսով են, որ Սյունիքի մարզային մարզապետի պաշտոնում վերանախնայումով հովանավորության խնդիրները կլուծվեն, իսկ իրենք հաղթանակներով բարձր կպահեն ոչ միայն մարզի, այլեւ հանրապետության մարզական պատիվը: Մրցանակակիր մարզիկներ

րին քաղաքապետարանում ընդունեց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, ով հետաքրքրվեց մարզիկների մարզումային պայմաններով եւ նոր հաջողություններ մարզեց: Իսկ նույնքանին Հունաստանում կայանալու է քիբ-քոսիցի եվրոպայի առաջնությունը:

ԱՎԱՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

**ՀՀ Սյունիքի մարզի Վաղարշի միջնակարգ դպրոցի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության փոփոխության պայմանագրի գրառման համար:**

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են.

1. ՀՀ քաղաքացիությունը
2. Բարձրագույն կրթությունը
3. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

**Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝**

1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը
3. Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն 3 օր առաջ)
5. Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում)
6. Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 21-ից նոյեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր, ժամը 10.00-ից մինչեւ 15.00 (բացի շաբաթ եւ կիրակի օրերից): Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 28-ին ժամը 15.00-ին, Սյունիքի մարզի Վաղարշի միջնակարգ դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝

(077) 69-48-48 հեռախոսահամարով:

**ՀՀ Սյունիքի մարզի Վաղարշի միջն. դպրոցի կառավարման խորհրդի նախագահ՝ Գ. Գալստյան**

**ՀՀ Սյունիքի մարզի «Որոտանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության փոփոխության պայմանագրի գրառման համար:**

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են.

1. ՀՀ քաղաքացիությունը
2. Բարձրագույն կրթությունը
3. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

**Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են.**

1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը
3. Հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ պատճենը
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը /ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ/
5. Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ /դրանց առկայության դեպքում/
6. Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են 2014թ. հոկտեմբերի 21-ից մինչեւ նոյեմբերի 19-ը ներառյալ ամեն օր, ժամը 10.00-15.00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 2014թ. նոյեմբերի 28-ին, ժամը 12.00-ին, Որոտանի հիմնական դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝

(093)14 89 38, (077) 32 73 28 հեռախոսահամարներով:

**ՀՀ Սյունիքի մարզի Որոտանի հիմն. դպրոցի կառավարման խորհրդի նախագահ՝ Տ.Գալստյան**

**Այունյաց երկիր**

S U S L O P S U Թ Ե Ր Թ

Գլխավոր խմբագիր՝ **ՍՍԱՎԵԼ ԱՆԵՍՏԱՆՅԱՆ**

**Հասցե՝** Կապան, Շահումյան 20/32:  
**Հեռախոս՝** (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:

**Էլ. փոստ՝** syuniacyerkir@mail.ru  
**Ինտերնետ՝** www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Լրուբերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱՂՈՒ ՇՆՆՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հոլումը «Այունյաց երկիր» պարտադիր է:

Շանի տակ տպագրվում են գրվագային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01U 000231:

Թղթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 17.10.2014թ.: